

ԱԶԻՊԷՅԾԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ
ԱՅՍՕՐ Կ'ԱՅՑԵԼԷ ԹՈՒՐՔԻԱ

Ազրպեյճանի արտաքին գործոց նախարարության մամուլ ծառայությունը երեկ հաղորդեց, որ Ազրպեյճանի արտաքին գործոց նախարար Ճեյհուն Պայ-րամով աշխատանքային այցելությամբ պիտի մեկնի Թուրքիա՝ մասնակցե-լու համար Ազրպեյճանի, Թուրքիոյ եւ Թուրքմենիստանի արտաքին գործոց նախարարներու եռակողմ հանդիպումին, որ այսօր տեղի պիտի ունենայ Ան-գարայի մէջ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱԿԱՅԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

20 փետրուարի հանրահաւաքը, անկախ վայրի եւ թուականի հետ կապուած խոր-հուրդներէն, հայրենիքի եւ պետականութեան փրկութեան ուղղութեամբ առնուող քայլերու նոր ելակետ կ'ենթադրէ: Կը համոզէ, նախ եւ առաջ, որ արծանագրուածը սոսկ իշխանա-փոխութեան առաջադրանք չէ, այլ պետակա-նութեան երթը վերադարձնել ազգային հուն: Փրկութեան գործողութիւն:

Դրսետրուած վճռակամութիւնը՝ հակառակ եղանակային խտտագոյն պայմաններուն, սկսուած երթի անտեղիտալիութեան մասին կը վկայէ: Երթ, որ կ'առաջադրէ գերիանդա-վառ մթնոլորտի մէջ ընտրուած խորհրդարա-նի վերածեալութիւնը, վերակայացումը: Եւ այդ ճամբով ազգային իշխանութիւններու հաստատումը՝ փրկելու համար հայոց պետա-կանութիւնը:

20 փետրուարը նոր ելակետ կրնայ ըլլալ նաեւ այն առումով, որ շարժումի համաժո-ղովորդայնացման նախադրեալները հաղոր-դեց: Անկախ փրկելու առաջադրանքին շուրջ համախմբուած քաղաքական բոլոր ուժերէն, ժողովրդային գանգուածն էր, որ երաշխաւո-րեց նոր երթի մեկնարկը՝ շարժումին ապահո-վելով նոր թափ, տարողութիւն եւ հեռանկա-րայնութիւն:

Ժողովրդային այս յենարանին վրայ պիտի կայանայ ամբողջ շարժումին յաջողութեան գրաւակալը: Ժողովուրդն է, որ իր հետագայ գործողութիւններով պիտի հունատորէ, ուղ-ղորդէ եւ յաջողութեան հասցնէ ամբողջ հա-մակարգի առողջացումը:

Ազատութեան հրապարակին վրայ հա-մախմբուած ժողովուրդը ոչ թէ այս կամ այն պետական անձնատրութիւն, կուսակցութիւն մերժելու կարգախօսով ոտքի ելած է, այլ փըր-կելու: Իսկ փրկելու համար գաղափարախօ-սութիւնն պետք է եւ ոչ թէ միայն մերժելու կար-գախօս. այդ գաղափարախօսութիւնը կործա-նած տարածքներու վերականգնումն է, ազգա-յին պետականութեան վերադիմագծումը, բա-նակի հեղինակութեան վերականգնումը, բա-նակցային դիրքերու ամրացումը, ինքնիշխա-նութեան վերակայացումը:

Համախմբուած ժողովուրդն է, որ կը մղէ բողոքի գործողութիւնները համակարգողնե-րը նոր մարտավարութեան դիմելու, շարժու-մին անդադարութիւնը ծրագրելու, նոր գա-նուածներով երթին համալրումը ապահովե-լու:

Միայն համապետական, համաժողովրդա-յին պարտադրանքն է, որ կրնայ ստիպել անձ-նատուական իշխանութիւնները հեռանալու որոշում կայացնելու: Հանրապետութիւնը հանրութեան պետութիւնն է եւ հանրութիւնն է որոշումին տեղը: Այս հանրութիւնը որոշէ լիազօրութիւն չէր տուած գործող իշխանու-թիւններուն զիջելու ո'չ միայն անվանագու-թեան գօտիներ, այլ նոյնիսկն արցախեան տարածքներ. որեւէ իրաւասութիւն չէր վստա-հած՝ Հայաստանի Հանրապետութենէն տա-րածքային կարգավիճակներ փոփոխութեան ենթարկելու, հայկական գիւղեր ազրպեյճա-նական տարածք համարելու, նոր սահմա-նագծումներ եւ սահմանագատումներ իրա-կանացնելու:

Հանրութեան կամարտայայտութեամբ չեն իրականացած այս բոլորը: Սահմանադրու-թեան առընթեր խախտած են նաեւ հանրա-պետութեան կայացման սկզբունքները: Միայն հանրութիւնն է, ժողովուրդը, ազգը, որ իրաւասու է վերջ տալու այս գործընթացնե-րուն: Ժողովրդային շարժումի գանգուածայ-նացումը, որուն մեկնարկը ազդարարեց 20 փետրուարի հանրահաւաքը, կը յաջողի կա-սեցնել այս կործանարար ընթացքը:

Ժողովրդավար կարգերը հանրութեան կամքը կը չափորոշեն ընտրութիւններու ար-դիւնքներով: Նոյն ժողովրդավար կարգերը, նման իրավիճակներու համար կը սահմանեն ինքնակամ հրաժարման, ինքնալուծարման, անցումի կառավարութիւններու փոխանցման դրութիւններ: Այս բոլորի բացառումը կ'են-թադրէ իշխանութեան կառչածութիւն՝ հակա-ռակ ամենէն դժուար ու ծանր կացութիւննե-րուն եւ տակաւին անորոշ գործընթացներուն:

Երբ չեն կատարուի այդ բոլորը, կը մնայ հանրութեան պարտադրանքի եղանակը: Հանրութեան պետութիւնը՝ Հանրապետութիւ-նը անհրաժեշտ է որ վերակայանայ: Իսկ վե-րակայացման համար հանրապետական մա-կարդակով ժողովուրդը պիտի առաքկայացնէ այդ կամքը:

20 փետրուարը համոզեց, որ կրնայ դրսե-տրուիլ այդ կամքը եւ ատով իսկ վերակայա-նալ Հայոց Հանրապետութիւնը:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՁ ԱՆՀՆԱԶԱՆԳՈՒԹԵԱՆ ԱՆԳԱԳՐՈՒՄ
ՇԱՐժՈՒՄՆԵՐԸ ՀԱԶԱՐԱՒՈՐՆԵՐՈՒ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՍԿԻԶԲ ԱՌԻՆ՝
ՓԱՇԻՆԵԱՆԻ ՀՐԱՄԱՐԱԿԱՆԻ ՊԱՀԱՆՁՈՎ

Երեկ՝ երկուշաբթի, 22 փետրուարին, Երեւանի Պրահայի այգիէն սկիզբ առաւ Հայրենիքի փրկու-թեան շարժումի անհնազանդութեան երթը, որուն բազմահազար մասնակիցները կը վանկարկէին «Նի-կոլ դաւաճան», «Առանց Նիկոլ Հայաստան»՝ պահան-ջելով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը:

Հայրենիքի փրկութեան շարժումի համակարգող, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեան անհնազանդութեան երթէն առաջ լրագրողներուն հետ ունեցած զրոյցին ընթաց-քին շեշտեց, որ Նիկոլ Փաշինեան պետք է հեռանայ՝ շեշտելով, որ միասնաբար կարելի է հասնիլ այդ նպա-տակին: Ան վստահեցուց, որ պիտի ընթանան սահմա-նադրական ճամբով:

Սաղաթելեան յայտնեց, որ ոչինչ պիտի վախցնէ կամ կասեցնէ զիրեն: «Եթէ իրենց կը թուի, որ կրնան մեր ժողովուրդին վախցնել իրենց յայտարարութիւ-ններով եւ ետ կանգնեցնել այս պահանջէն, չարաչար կը սխալին, մեր պայքարը կանգ պիտի չառնէ, պիտի շարունակենք մինչեւ վերջ», նշեց ան: Իշխան Սաղա-թելեան հաստատեց, որ պիտի չտարուին սադրանքներու, բայց նա-եւ թոյլ պիտի չտան, որ երբեւէ ռեւ մեկը տարբեր սպառնալիքնե-րով ահաբեկէ մեր ժողովուրդը:

Երթին մասնակիցները Քոչար փողոցով ուղղուեցան դէպի Բաղ-րամեան պողոտայ:

«2300 հայ մայր կը փնտռէ իր գաւազը, իսկ Ազրպեյճանը յայտա-րարեց, որ այլեւս թոյլ պիտի չտայ, որ գրաւեալ տարածքներուն մէջ որոնողական աշխատանքներ կատարուին: Նիկոլ Փաշինեանը պայմանաւորուած ձեւով յանձնած է Արցախը: Նիկոլ Փաշինեանը եւ իր վարչախումբը պիտի կանգնին դատարանին առջեւ: Պիտի ըլ-լայ Արցախը յանձնողներու Նիւրեմպերկը, եւ ռեւ մեկը ատկէ չկասկածի», երթին ընթացքին յայտնեց Ազգային ժողովի Բարգա-ւաճ Հայաստան խմբակցութեան պատգամաւոր Նայիրա Չոհրաբ-եան:

«Այս իշխանութեան ամենէն լաւիւր է ամենէն շնական ներկայա-ցուցիչներէն մեկը երեկ մեզի փոխանցած է գերագոյն-գլխաւոր

ՊԼԻՆՔԸՆ. «ԿԸ ԶԳՏԻՆՔ ԻՐԱՆԻ ՀԵՏ ՀԻՒԼԷԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐԻՆ ՇՈՒՐՁ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ
ԵՐԿԱՐԱԶԳԵԼ ԵՒ ԱՄՐԱՊՆԴԵԼ»

Միացեալ Նահանգնե-րու արտաքին գործոց նախարար Էնթոնի Պլին-քըն նշեց, որ իր երկիրը կը ձգտի Իրանի հետ հիւ-լեական ծրագիրին շուրջ համաձայնագիրը երկա-րաձգել եւ ամրապնդել՝ աւելցնելով. «Ամերիկան նաեւ կը ձգտի աշխատիլ շրջանին մէջ Իրանի ապակայունացը-նող գործողութիւններուն եւ թեւաւոր հրթիռներ զարգացնելու հարցերով»:

Պլինքըն ըսաւ, որ Իրան պետք է



յարգէ Հիւլեական ուժա-նիւթի միջազգային գոր-ծակալութեան հետ իր կնքած ապահովութեան երաշխաւորման համա-ձայնութիւններն ու բոլոր միջազգային յանձնառու-թիւնները:

Ամերիկեան դիւանա-գիտութեան պետը նաեւ յայտնեց, որ իր երկիրը մտադիր է Զի-նաստանէն պահանջել իր գէնքերու ծրագիրին վերաբերեալ աւելի մեծ թա-փանցիկութիւն երաշխաւորել:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՂԷՏ ԻՐԱՆՅԵԼԻ ՄԷՁ.
ՄԱՋՈՒԹԸ ԱՂՏՈՏԱԾ Է ՄԻՋԵՐԿԱՐԱԿԱՆԻ ԱՓԵՐԸ

Տասնեակ թոն մագուրթ թափած է Իսրայէլի՝ Մի-ջերկրական ծովու ափե-րու մէծ մասին մէջ: Տե-ղական իշխանութիւննե-րը կը խօսին երկրի պատմութեան մէջ մեծա-գոյն բնապահպանական աղէտին մասին: Այս մա-սին կը հաղորդէ «Պի.Պի.Ս.Ս.»-ի ռուսական ծառայութիւնը:

Շար.ը՝ էջ 8



ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ Կ'ՈՒԶԵՆ
ԸՆԴԼԱՅՆԵԼ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՁ ԻՐԵՆՅ
ՁԻՆՈՒՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներ կ'առաջարկեն Յունաս-տանի հետ նոր պաշտ-պանական համաձայնա-գիրին մէջ ներառել երկրի պատմութեան մէջ ամերիկա-ցի զինուորներու տեղա-կայման կէտը, եւ համա-ձայնագիրը ամեն տարի վերանորոգելու փոխա-րէն, զայն վերանորոգել հինգ տարին անգամ մը:

Շար.ը՝ էջ 8



ՎԱԶԳԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԱՌԻԹՈՎ ՅԱՐՈՒՑՈՒՄԸ Է
ՔՐԷԱԿԱՆ ԳՈՐԾ

Հայրենիքի փրկութեան շարժումի վարչապետի թեկնածու Վազգէն Մանու-կեանի՝ 20 փետրուարին հանրահաւաքի ընթացքին կատարած յայտարարու-թիւններուն կապակցու-թեամբ ոստիկանութեան կեդրոնին մէջ յարուցուած է քրեական գործ: Ըստ «Արմէնփրես»-ի, այս մա-սին ըսին Հայաստանի ընդհանուր դատախազութեան հանրային կապերու բաժինէն:

Հայաստանի ընդհանուր դատախազութեան հան-րային կապերու բաժինէն նշեցին, որ քրեական գործը յատուցուած է Հայաստանի Զրեական օրէնսգիրքի 301-րդ յօդուածով (Իշխանութիւնը զաւթելուն, տարած-քային ամբողջականութիւնը խախտելուն կամ սահմա-նադրական կարգը բռնի տապալելուն ուղղուած հրա-պարակային կոչեր): Զրեական գործը ուղարկուած է Հայաստանի քննչական կոմիտէ՝ վարոյթ ընդունելու եւ նախաքննութիւն կատարելու նպատակով:

Վազգէն Մանուկեանը յայտարարած էր իշխանու-թիւնները հեռացնելու տարբերակներուն մասին՝ այդ կարգին նշելով, որ պետք է պատրաստ ըլլալ կայծակ-նային արագութեամբ՝ ապստամբելով վերցնելու իշ-խանութիւնը:

ԱՄՏՐԱԼԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ
ԱԶԱՑՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԱԾ Է ԵԱՀԿ-Ի
ՄԻՆՍԲԻ ԽՄԲԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ՝
ԸՆԴՊԾԵԼՈՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ
ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՌՈՒՆՔԻ
ԿԱՐԵՌՈՐՈՒԹԻՒՆԸ

Աւստրալիոյ արտաքին գործոց նախարար Մերիս Փելլի վերահաստատած է ավստրալիական կառավա-րութեան աշակցութիւնը ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի գործունէութեան՝ շեշտե-լով «Ժողովուրդի ինքնու-րոշման իրաւունքը», իրել մեկը երեք հիմնարար սկզբ-բունքներէն, որոնք պետք է առաջնորդեն Լեռնային Ղարաբաղը դէպի յարաւոյն խաղաղութիւն: Այս մասին կը հաղորդէ Աւստրալիոյ Հայ դատի յանձնախումբը:

Շար.ը՝ էջ 8



ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԸ ԿԸ ՄՆԱՅ ՏԵՂՔԱՅԼԻ ՄԵՉ

Մինչ նշանակուած վարչապետ Սաատ Յարիրի կը ծրագրէ կրաքական Միացեալ Եմիրութիւններէն Զուէթ մեկնիլ, Լիբանանի մէջ շրջանառութեան մէջ դրուած են այնպիսի տեղեկութիւններ, թէ 18 նախարար հաշուող կառավարութիւն պիտի չկազմուի, այլ ճիգեր ի գործ կը դրուին 22 կամ 24 նախարարներէ բաղկացող կառավարութիւն մը կազմել:

Այս լուրերուն գուցահեռ, Սաատ Յարիրիի մօտիկ աղբիւրներ երկէ գիշեր հերքեցին նման ճիգերու գոյութիւնը՝ վերահաստատելով, որ Յարիրի կառչած կը մնայ 18 նախարարով կառավարութիւն կազմելու իր կեց-լածքին, ինչ որ կը նշանակէ, թէ կառավարութեան կազմութեան հոլովոյթը կը մնայ տեղեայլի մէջ:

Մինչ քաղաքական այդ հոլովոյթին տեղեայլը կը շարունակուի, օրական իր ապրուստը շահելու լիբանանցիին պայքարը աւելի կը թեժանայ ու կարգ մը շրջաններու մէջ կը վերածուի բողոքի ցոյցերու:

Այդ ցոյցերը երկէ դրսեւորուեցան Յամրայի մէջ, Ժալ Էլ Տիպի մայրուղիին վրայ, Սայտայի մէջ, Անթիլիասի մայրուղիի մասնակի փակումով, իսկ երեկոյեան Զարանթիւն-Կերոնական Պէյրութ մայրուղիի փակումով: Միւս կողմէ, հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն երկէ շնորհաւորեց Լիբանանի տղոց պասքեթբոլի ազգային խումբը՝ Պասքեթբոլի Ասիոյ ախոյեանութեան գտումի մրցումները յաջողութեամբ աւարտելու առիթով:

Ան շեշտեց, որ ինք վստահ է, թէ անոնք նոյն կորովով պիտի շարունակեն մրցումները՝ Լիբանանի անուըն բարձր պահելու համար:

Այս բոլորին գուցահեռ, երկէ Պէյրութի նաւահանգիստի գոհերուն ընտանիքները այցելեցին Արդարութեան գերագոյն խորհուրդի նաւահանգիստի պայթումի հետաքննութեան պատասխանատու դատարոյ Թարեք Պիթարի:

Հանդիպումէն ետք գոհերուն ընտանիքներուն անու-նով բանբեր մը յայտնեց, թէ Պիթար ամէն ճիգ ի գործ պիտի դնէ այս իմաստով եւ՝ առանց ջանք ինչայելու: Ան հաստատեց նաեւ, որ գոհերուն ընտանիքներէն կարգ մը անհատներ կը նախընտրեն ուղղուիլ միջազգային հետաքննութեան ընտրանքին՝ աւելցնելով, որ անոնք իրանուը ունին որոնելու ճշմարտութիւնը՝ մասսամբ անոքելու համար իրենց հարազատներուն կորուստին ցաւը:

Ան յայտնեց նաեւ, որ Պիթար հետաքննութիւնը պիտի շարունակէ այն կէտէն, ուր հասած էր նախորդ դատարոյ Ֆատի Սուուան:

«Մենք Թարեք Պիթարին երեք շաբթուան ժամանակ կու տանք հանգիստ գործելու: Դատարոյ Պիթար վճռա-կամ է եւ անաչառ, իսկ մենք քայլ առ քայլ պիտի հետե-ւինք հետաքննութեան ճակատագիրին», ըսաւ ան:

Այս շրջագիծին մէջ Դզօր հանրապետութիւն պլոքի մէկ պատուիրակութիւնը, որուն մաս կազմեցին երես-ւոյթիաններ Ժորժ Օքէյ, Ֆատի Սաատ, Իմատ Ուաքիմ եւ Էտի Ապի Լամաա, երկէ հանդիպում մը ունեցաւ Լի-

բանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնա-կան ներկայացուցիչի տեղակալ Նաժաթ Ռուշտիի հետ, որուն յանձնեց բողոքագիր մը՝ պահանջելով Պէյրութի նաւահանգիստի պայթումին մասին միջազգային հե-տաքննութիւն բանալ՝ իմանալու համար այդ պայթու-մին ծայքերը:

Հանդիպումէն ետք Օքէյս յայտնեց, որ Ռուշտիի յանձնած են բողոքագիր մը, որուն մէջ պահանջած են միջազգային հետաքննութեան խմբակ՝ բացայայտելու համար Պէյրութի նաւահանգիստի պայթումին որդա-պատճառները:

Ան հաստատեց, որ իրենք կառչած պիտի մնան այդ պայթումին վերաբերող ճշմարտութեան բացայայտու-մին, արդարութեան հաստատումին եւ գոհերու ընտա-նիքներուն տրամադրուելիք հատուցումներուն:

ՄՏԱԽՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ ԱՆԻՍ ՆԱՔՔԱՇ ՈՉ ԵՒՄ Է

Լիբանանցի մտաւո-րական եւ քաղաքակա-ն վերլուծաբան Անիս Նաքքաշ երկէ կնքեց իր մահկանացուն:

Պաշտօնիստեան դա-տի բուն պաշտպան-ներէն մէկը նկատուող Անիս Նաքքաշ 1964-ին անդամակցած է պա-ղետիներէն Ֆաթի շարժումին եւ մասնակ-ցած է շարք մը գործո-ղութիւններու՝ Լիբանա-նի, պաղետիներէն հո-ղերու եւ Եւրոպայի մէջ:

1980-ին Նաքքաշ ամբաստանուեցաւ Մոհամետ Ռե-զա Փաիլաի շահին օրով Իրանի վերջին վարչապետ Շահիփուր Պախիթարը Փարիզի մէջ մահափորձի եւ-թարկելու յանցանքով եւ ստացաւ ցմահ բանտարկու-թեան վճիռ: Տասնամեակ մը ետք, Անիս Նաքքաշ ազատ արձակուեցաւ Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Միթերանի ներման հրամանագիրով:

70-ամեայ մտաւորական «Զորոնա»-ի ժաիրին դէմ մղած իր մարտը կորսնցուց Դամասկոսի հիւանդանոց-ներէն մէկուն մէջ:

Նաքքաշի մարմինը այսօր Դամասկոսէն կը փոխադ-րուի Պէյրութ, ուր ան իողին կը յանձնուի:



Վ. ՕՀԱՆԵԱՆ-ԳԷՈՐԳԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ՈՒԵՀՊԵԻ ԵՒ ՄԵԾԱՐԵՑ «ԱՐՔԱՆՍԻԵԼ»-Ը

Երիտասարդութեան եւ մարմնակը-թութեան նախարարի պաշտօնակա-տար Վարդիկ Օհանեան-Գեորգեան երկէ այցելեց արտաքին գործոց եւ ար-տերկրի լիբանանցիներու հարցերու նախարարի պաշտօնակատար Շար-պէլ Ուեհպէի, որուն հետ ընկարկեց



Ֆրանսախօս երկիրներու միութեան անդամ երկիրներու երիտասարդու-թեան եւ մարմնակրթութեան նախա-րարներուն գումարելիք ժողովին իր մասնակցութեան վերաբերող հարցեր:

Նշեց, որ այդ ժողովին տեղի պիտի ունենայ Ֆրանսախօս երկիրներու միութեան երիտասարդութեան եւ մարմնակրթութեան հաստատութեան ընդհանուր քարտուղարի ընտրութիւն:

Միւս կողմէ, Վ. Օհանեան-Գեորգ-եան երկէ նախարարութեան կեդրոնին մէջ ընդունեց «Արքանսիէ» բարեսի-



րական միութեան մէկ պատուիրակու-թիւնը, որուն մաս կազմեցին միութեան ծրագիրներու նստքէն Նետիմ Ապտո եւ Դաշմուած անհատներու ազգային խորհուրդի անդամ Ժորժ Զոսթանո:

Նախարարի պաշտօնակատարը

մեծարեց «Արքանսիէ»-ը, որուն ջան-քերով կարելի եղաւ երիտասարդու-թեան եւ մարմնակրթութեան նախա-րարութեան շէնքը նորոգել՝ Պէյրութի նաւահանգիստի պայթումէն անոր կրած վնասներէն ետք:

Վ. Օհանեան-Գեորգեան շնորհա-կալութիւն յայտնեց միու-թեան՝ նախարարութեան շէնքը նորոգելու իր նա-խածեռնութեան առիթով՝ աւելցնելով, որ այդ աշ-խատանքը շատ արագ կատարուած էր:

Հանդիպումին ընթաց-քին ընկարկուեցան նա-խարարութեան եւ միու-թեան միջեւ փոխադարձ գործակցութեան անհրա-ժեշտութիւնը եւ երկկող-մանի այն ծրագիրները, որոնք կարելի է միասնա-

բար յաջողեցնել՝ նպաստելու համար լիբանանցի երիտասարդներուն:

Համաձայնութիւն գոյացաւ աւելի ուշ կազմակերպելու աշխատանիստ մը՝ միացեալ գործակցութեան ծրագիր մը մշակելու նպատակով:

Վ. ՕՀԱՆԵԱՆ-ԳԵՈՐԳԵԱՆ ԿԸ ԵՆՈՐՅԱՌԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՏՆՈՑ ՊԱՏԵՃՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Երկէ երեկոյեան Վ. Օհանեան-Գեորգեան հետեւեալ գրառումին ընդ-մէջէն շնորհաւորեց Լի-բանանի տղոց պասքեթ-բոլի ազգային խումբը.

«Լիբանանի տղաքը ար-ժանի կերպով ներկայ գտնուեցան մրցումնե-րուն... Այնպէս ինչպէս Պահրէյնը եւ Իրաքը զոյգ անգամներ տապալած էին, վերահաստատեցին Զնդկաստանի դէմ իրենց յաղթանակը՝ Մայրիներու հաւաքականը արժա-նացնելով Պասքեթբոլի Ասիոյ ախոյեանութեան

աւարտականին հասցնելու ամբողջա-կան կէտով (6/6): Ախոյեաններ, ինչպէս որ մեզի վարժեցուցած են: Շնորհաւոր ըլլայ Լիբանանի արժանաւոր եւ պատ-ւաբեր մասնակցութիւնը Ասիոյ ախոյ-եանութեան հարսանիքին»:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԴ ԼՈՒՐԵՐ

●ԱՌՈՂԶԱՊԱՐՈՒԹԵԱՆ նախարա-րութեան համաձայն, Լիբանանի մէջ «Զորոնա» ժաիրով վարակուածներու թիւը անցնող 24 ժամուան ընթացքին հասաւ 1541-ի, իսկ մահացածներունը՝ 47-ի:

●ՄԱՐՈՒՆ համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երկէ Պքերքէի մէջ ընդու-նեց Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչի տեղա-կալ Նաժաթ Ռուշտի, որուն հետ ըըն-նարկեց լիբանանեան իրադարձութիւ-նները, ինչպէս նաեւ Լիբանանի համար միջազգային խորհրդածողով մը գու-մարելու իր կոչը: Ռուշտի յայտնեց, որ ՄԱԿ միշտ կը զօրակցի Լիբանանին:

●ՏԻՐԶԻ համայնքի հոգեւոր պետ շէյխ Նայիմ Հասան երկէ ընդունեց Լի-բանանի մէջ Սեուական Արաբիոյ դեսպան Ուլաիտ Պուխարին, որուն հետ ընկարկեց լիբանանեան իրադար-ձութիւնները: Շէյխ Հասան գնահատեց Ռիատի զօրակցութիւնը Լիբանանի՝ ժողովուրդին եւ պետական հաստա-տութիւններուն, իսկ Պուխարի շեշտեց, որ Լիբանան քաղաքակրթական պատ-գամ մըն է, եւ լիբանանցիներուն ճըզ-տումները անպայման յաղթանակ պի-տի արձանագրեն:

●ԱՐՏԱԶԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարա-րի պաշտօնակատար Շարպէլ Ուեհպէ երկէ ընդունեց Հաւատարմութիւն դի-մարդութեան պլոքի երեսփոխան Հա-սան Իգէտտիին, որուն հետ ընկարկեց լիբանանեան եւ միջազգային քաղա-քական իրադարձութիւնները:

●ԵԼԵԻՄՈՒՏԵԻ նախարարի պաշտօ-նակատար Ղազի Ուազիի երկէ ընդու-նեց Լիբանանի մէջ Եգիպտոսի դես-պան Եսսեք Ալաուին, որուն հետ ըըն-նարկեց լիբանանեան-եգիպտական երկկողմանի յարաբերութիւններն ու գնանք բարելաւելու հեռանկարները: Զննարկուեցան նաեւ Եգիպտոսի կող-մէ Լիբանանի մատուցուած օժանդա-կութիւնները:

●ԱՆԻՍԻՆ վարչապետ Ֆուատ Սի-նիորա հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ կարելի չէ հարցերը բնա-կանոնացնել, երբ պետութեան մէջ գո-յութիւն ունի փոքր պետութիւն մը: Ան հաստատեց, որ Ազգային ազատ հո-սանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պասիլ վնաս

հասցուցած է հանրապետութեան նա-խագահութեան պաշտօնին, եւ կոչ ուղղեց նշանակուած վարչապետ Սաատ Յարիրիին՝ կառչած մնալու իր կեցուածքին:

●ՀՅՕՐ հանրապետութիւն պլոքի երեսփոխան Փիեռ Պու Ասի հարց տը-լաւ, թէ արդեօք արտաքին երկիրներուն հետ Լիբանանի կապը խզելով, զայն մեկուսացնելով եւ լիբանանեան պե-տութեան մէջ գործող փոքր պետու-թեան զօրակցելով կարելի կ'ըլլա՞յ ապահովել քրիստոնեաներուն իրա-ունքները: Ան շեշտեց, որ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկա-վար, երեսփոխան Ժըպրան Պասիլի խօսքերը իրեն համար անկարելու են՝ աւելցնելով, որ ինք հորիզոնին վրայ նոր կառավարութիւն մը չի տեսներ:

●ՀՅՕՐ Լիբանան համախմբումի երեսփոխան Ասատ Տըրդամ անհրա-ժեշտ նկատեց, որ կառավարութիւնը վերատեսութեան ենթարկէ բանակա-յիներուն ամսական աշխատավարձը:

●ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ հանդի-պում պլոքի երեսփոխան Նաամէ Թոհ-մէ զգուշացուց ընկերային պայթում մը՝ աւելցնելով, որ Լիբանան կը զըտ-նուի շատ դժուար ամիսներու դիմաց, «երբ լուծման նշոյլն իսկ չ'երեւիր», աւելցուց ան:

●ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ժողովրդավարա-կան կուսակցութեան ղեկավար, երես-փոխան Թալալ Արալս յայտնեց, որ իրենք 18 նախարար հաշուող կառա-վարութիւնը կտրուկանապէս կը մեր-ժեն՝ հաստատելով, որ իրենց բոլոր դաշնակիցները համաձայն են, որ տիրազի համայնքին իրաւունքները չտուակոյրին:

●ՄՈՒԲԱԶՊԱԿ պլոքի երեսփոխան Հատի Հայէշ յայտնեց, որ քրիստոնեայ համայնքի իրաւունքներուն առաջնա-հերթութիւնը այն է, որ խորհրդարա-նին մէջ անոնք ներկայացուցչութիւնը սրբազրուի՝ մասնակի երեսփոխանա-կան ընտրութիւններու ընդմէջէն:

●ՀՅՕՐ հանրապետութիւն պլոքի երեսփոխան Ուեհպէ Զաթիշա յայտ-նեց, որ քրիստոնեաներն ու Լիբանանը վտանգի մէջ են, եթէ անոնք իրենք զի-րենք չ'իրկեն՝ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփո-խան Ժըպրան Պասիլին:

Շար.ը՝ էջ 8

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ՎԱՅԷ ՄԵԹԵԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԱԶՄԱՆ ԳՐԱՏԱՐԱԾ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ԱՌՑԱՆՑ ԵՐԿՈՒ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

Համազգայինի «Վաիէ Մեթեան» հրատա-րակչատան գրատարածը, փետրուար ամ-սուան ընթացքին, կազմակերպեց վիճակա-հանութեան առցանց երկու ձեռնարկներ: Այս ձեռնարկներուն մասնակցեցան Լիբա-նանէն, Հայաստանէն եւ տարբեր երկիրներէ աւելի քան 700 ընթերցասերներ, մանուկներ եւ պատանիներ:

Առաջին մրցումին պարգետներն էին Հա-մազգայինի հրատարակութիւններէն՝ «Ուլ-



քեր եւ սպաննել Զեմալ Փաշան», «Աշոտ Եր-կաթ» եւ «Սեմեր»: 20 բախտաւորներ ստա-ցան այս գիրքերէն ծրարներ:

Երկրորդ մրցումը ուղղուած էր պատանի-ներուն եւ մանուկներուն: Բախտաւորները, Համազգայինի մանկական հրատարակու-թիւններէն, ստացան իրենց հետաքրքրական գիրքեր՝ «Թումանեան հեքիաթներ», «Հա-



սական հերոսներ», «Առակներ», «Ժամանա-կակից հեքիաթներ» եւ «Արտասահմանեան հեքիաթներ»:

Երկու վիճակահանութիւններուն ընթեր-ցասերները առիթը ունեցան մասնակցելու՝ Համազգայինի գրատարածի «Գանձարան» դիմատետրի էջին ճամբով եւ երկու վիճա-կածգութիւններն ալ սփռուեցան նոյն էջէն:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Երիզ Մարութեան-Պոյաճեան
Տէր եւ տիկին Սիմոն եւ Մարալ Թաշճեան
Տէր եւ տիկին Չարեհ եւ Սիլվա Տէր Կաչատուրեան
եւ զաւակները՝ Արեւ, Շանթ եւ Գալին
Տէր եւ տիկին Եմին եւ Շաքէ Հատտատ
Տէր եւ տիկին Գրիգոր եւ Վերա Չոփուրեան
եւ զաւակունք

Տիկին Անի Չոփուրեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Րաֆֆի եւ Էմմա Պախամեան
եւ զաւակունք
Տէր եւ տիկին Իպրահիմ եւ Լենա Պետրոս
եւ զաւակունք

Տիկին Անգինէ Մարութեան
Տիար Գաբրիէլ Պողիկեան
Տէր եւ տիկին Պերճ եւ Չարմիկ Պողիկեան
եւ զաւակունք

Տէր եւ տիկին Հրաչ եւ Մարինա Պողիկեան
եւ զաւակունք

Պոյաճեան եւ Մարութեան ընտանիքներ
Թաշճեան եւ Տէր Կաչատուրեան ընտանիքներ
Տօնապետեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գումեն իրենց ամուս-նոյն, հօր, մեծ հօր, եղբօր, քեռիին եւ հարազատին՝

ՅԱԿՈՒ (ԺԱՔ) ՊՈՅԱՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ կիրակի, 21 փետրուար 2021-ին, յետ կարճատեւ հիւանդութիւնը:

Յուդարկաւորութեան արարողութիւնը կատար-ւեցաւ կիրակի, 21 փետրուարին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փո-խադրուեցաւ Ֆրն Շրպպէի Ազգային գերեզմանո-ւնը:

●Ներկայս ընդունիլ իբրեւ մահադգ:
●ԾԱՍԾԸ - Փոխան Ճողկոյսպակի՝ Նուիրատուու-թիւնները կատարել ՀԱՄԱ Պէյրութի «Ճաք Պոյաճե-ան» ֆոնտին:

●Սկստի ունենալով «Զորոնա» ժաիրի համաճա-րակին տեղեւած դժուարութիւնները՝ հանգուցեալին ընտանիքը ցաւակցութիւնները պիտի ընդունի հե-ռաձայնի եւ ընկերային ցանցի միջոցով:

Էլիզ՝ 03-447088 Մարալ՝ 03-814379
Սիլվա՝ 03-581044 Շաքէ՝ 70-958618

«ԴՐՕՇԱԿ»-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂ

ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ԸՆԹԱՑՔԸ ԿԱՍԵՑԵԼ ՑԱՆԿԱՑԱԾ ԳՆՈՎ

2020 թուականի աւարտին Նիկոլ Փաշինեանը յայտարարեց արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ անցկացնելու մասին, այս հարցով նախաձեռնեց արհեստական բնարկումներ մարդ-կուսակցութիւնների հետ, զուգահեռաբար ծաւալեց համապատասխան քաղաքականութիւն: Մօտաւորապէս ամիսուկէս անց նա, իբր թէ իր գլխաւորած ուժի հետ հարցը բնարկուելուց լետոյ, յայտարարեց, որ արտահերթ ընտրութիւններ տեղի չեն ունենայ: Միաժամանակ օդում կախուած մնաց այն վարկածը, թէ անհրաժեշտութեան պարագայում (այսպէս ասած՝ հասարակական պահանջի դեպքում) վերադարձ կը լինի նոյն օրակարգին:

Նախ պետք է արձանագրել, որ պետական-քաղաքական գործընթացները վարչապետի համար մնում են ձեռնաձուլութեան առարկայ՝ պահի ներքաղաքական խնդիրներ լուծելու համար: Ընդ որում, նոյն ժամանակ բացարձակ անտարբերութիւն է դրսեւորում թէ՛ Արցախի ներկայի ու ապագայի, թէ՛ քայլ-քայլ Յայաստանի հաշուին սահմանները առաջ տուող թշնամու գործողութիւնների, թէ՛ նահատակուած ու գերի զինուորների ճակատագրի եւ թէ՛ Յայաստանի ու Արցախի առջեւ ծառացած կենսական այլ խնդիրների հարցում:

Ինչեւէ, վերադառնանք արտահերթ ընտրութիւնների հարցին:

Նախորդ տարուայ դեկտեմբերին Փաշինեանի հրաժարականի պահանջի ալիքը հասաւ զարգացման զազաթնակետին, եւ ակնյայտօրէն այս հանգամանքը ստիպեց իշխանութիւնը կորցնելուց սարսափող բախտախնդիր ղեկավարին հրապարակ նետելու մի գաղափար, որը պետք էր շեղեր իրադարձութիւնների ընթացքը, ձգձգեր հանգուցալուծումների ժամանակը, ինչպէսեւ համընդհանուր մերժման դատապարտուած ղեկավարին օժտեր ներքաղաքական դաշտ վերադառնալու քաղաքական, բարոյական օրինականութեամբ: Արտահերթ ընտրութիւնների գաղափարը Փաշինեանի վերջին խաղաթուղթն է յանձնուելուց առաջ, որովհետեւ պարունակում է մեծ ռիսքեր իր, ինչպէսեւ իր անպատասխանատու խմբակի հետագայ ճակատագրի համար, եւ նա մեծ հրճանքով պիտի հրաժարուէր որակից, եթէ հնարաւոր լինէր դեռեւս գրպանում պահել այդ վերջին փամփուշտը: Ի՛նչ իրողութիւններ ի յայտ եկան յայտարարուած նախաձեռնութիւնից տեքայլ անելու համար: Որոշ մեկնաբանների կարծիքով, այս հարցում մեծ դեր է խաղացել Ռոպերթ Զոյհարեանի յայտարարութիւնը գալիք ընտրութիւններին մասնակցելու վերաբերեալ: Անկախ այն բանից, թէ ընկերային ցանցերով ու անձնական օգտագործման լրատւամիջոցներով շրջանառուող վարկանիշային ինչպիսի ցուցանիշներ կը նկարուեն հեղինակագրկուած ղեկավարի համար, ակնյայտ է, որ ընտրութիւնների պարագայում նա չի կարող առաջնային տեղ գրաւել, եւ իր գլխաւորած ուժը հնարաւորութիւն չի ունենալու գոնէ դաշինքներ կազմելով՝ ապահովելու խորհրդարանական մեծամասնութիւն:

Ի հարկէ, կաշին փրկելու համար Փաշինեանը չի խորշի կոպիտ ընտրախախտումների դիմելուց, սակայն որքան էլ վերելներում գտնուեն իր կամքին հիւլ ջուլաթերթիկներ հաշուողներ, վերջիններին հնարաւորութիւնները նոյնպէս սահմանափակ են, քանի որ ամբողջ Յայաստանով մէկ դժուար է լինելու հաշարկ անել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների եւ ընտրական յանձնաժողովների վրայ, որոնք պատրաստակամ կը լինեն Նիկոլ Փաշինեանի օգտին կեղծարարութիւններ թոյլ տալ: Ակնառու փաստ է, որ Փաշինեանն ու իր խմբակը կորցրեց են իրական իշխանութիւնը երկրում, եւ ապօրինութիւններ գործելու նրանց պարտադրանքին բջերը կ'ենթարկուեն: Վարչաքաղաքական առումով խակ, արտաքին կասկածելի ազդեցութիւնների ենթակայ եւ բարոյապէս անընդունելի խմբակիցները, որոնք սահուն կերպով իշխանութեան աթոռների յայտնուեցին հենց միայն «յեղափոխութեան» առաջնորդի հետ քայլելու շնորհիւ, այլեւս միայն դէպի գրոյացում են ձգելու իրենց խմբակի եւ առաջնորդի՝ անկում ապրող վարկանիշը: Այս հարցին մանրամասնութեան անդրադարձանք, որովհետեւ չենք կասկածում, որ Նիկոլ Փաշինեանը ընտրութիւնների վերջին փրկոցակին կը վերադառնայ, երբ հրաժարականի պահանջով ճնշումը դառնայ այլեւս անյարթահարելի:

Ինչպէս, սակայն, ասում ու գրում է անդադար, մէկ օր աւելի իշխանութեան ղեկի մօտ Նիկոլ Փաշինեանի մնալը հայրենիքին բերում է նորանոր կորուստներ ու ցաւագին անակնկալներ, որոնց հանրագումարը կարող է անշուշտի դարձնել մեր պետականութեան կործանումը: Իշխանաւորների կողմից պարբերաբար ձեռնարկուող գործողութիւններն ու յայտարարութիւնները ամրապնդում են կասկածը, որ Արցախի յանձնումը պարզապէս պատերազմական գործողութիւնների հետեանք չէր, այլ շատ աւելի մեծ ու ծաւալային դաւադրութեան մէկ արարք:

2020 թուականի փետրուարի 10-ին՝ Ազգային ժողով-կառավարութիւն հարցի ու պատարարի ժամանակ, Յայտարարեց գործերի նախարար Արա Այվազեանը մասնաւորապէս յայտարարեց. «Թուրքիան միջազգային հանրութեան ճնշման ներքոյ հետզհետեւ պետք է վերադառնալ բնականոն գործընթացի, եւ նախ եւ առաջ խօսքը այն մասին է, որ այլեւս պատճառ չկայ Յայաստանի հանդէպ կիրառելու շրջափակում: Ինչպէս գիտէք, շրջափակումը եւ սահմանների փակուելը թուրքական կողմը պայմանաւորում էր



Արցախում սթաթիս-քուոյով, որը փոխուել է ուժի կիրառման միջոցով, եւ այլեւս Թուրքիան որեւէ պատճառ չունի սահմանը փակ պահելու Յայաստանի ուղղութեամբ: Այս պահի դրութեամբ որեւէ գործընթաց տեղի չի ունենում, բայց Յայաստանը եւ մեր դիւանագիտութիւնը գործուն ջանքեր են գործադրելու, որ մեր անմիջական շրջապատը դառնայ նպաստաւոր մթնոլորտ Յայաստանի անվտանգութեան ամրապնդման համար: Կրկնում եմ, որ անվտանգութեան մթնոլորտն իր մէջ պարունակում է շատ տարրեր»: Անուածից ակնյայտօրէն հետեւում է, որ Յայաստանի իշխանութիւնների համար վերջին պատերազմի պատճառով Արցախի հարցում ստեղծուած իրավիճակն ընդունելի իրողութիւն է, որը նաեւ «նպաստաւոր» հող է ստեղծել, որպէսզի Թուրքիան վերացնի Յայաստանի շրջափակումը, եւ մեր շրջապատում հաստատուի «նպաստաւոր մթնոլորտ»:

Այդ «նպաստաւոր մթնոլորտ»-ի համար, սակայն, Լեւոն Տէր Պետրոսեանի ժամանակներից Թուրքիան հայկական կողմին ներկայացրել է բազմաթիւ այլ նախապայմաններ եւս, որոնց համաձայնել չհամարձակուեցին անգամ համայնավարները իրենց կառավարման տասնամեակներին: Ինչպէս տեսնում ենք, սակայն, Նիկոլ Փաշինեանն ազգային ու բարոյական կաշկանդուածութիւն չունի, եւ հաւանականութիւնը մեծ է, որ կարող է ստորագրել Արցախի ու Յայաստանի համար ճակատագրական ցանկացած փաստաթուղթ: Նա, ըստ էութեան, այդ հայրենադաւ գործընթացի մէջ է դեռեւս պատերազմական շրջանից, եւ նոյն բեմադրութեան առանձին դրուագները կարելի է համարել ե՛ւ Շուշիի ու Արցախի չգրաւուած տարածքների յանձնումը, ե՛ւ Մեղրիով Թուրքիային ճանապարհ տալու համաձայնութիւնը, ե՛ւ Չանգեզուրի հայկական պատկանելութիւնը վտանգող զարգացումները, ե՛ւ ամէն օր ի յայտ եկող նոր իրողութիւնները, որոնք միտում են վերացնելու Արցախի ինքնուրոյնութիւնն ու փոխկապուածութիւնը Յայաստանի հետ՝ քայլ առ քայլ փոխարինելով այն ազդպէճանական ենթակայութեամբ:

Իրեն յատուկ խաղաղապալից գործելակերպի համաձայն, Յայաստանի իշխանութիւնը հասանելի աղբիւրներով հայ հանրութեան շրջանում փորձում է տարածել այն մտայնութիւնը, որ այսօր Արցախի շուրջ տեղի ունեցող շատ գործընթացների թելադրող Ռուսաստանն է, մասնաւորապէս՝ տարածաշրջանում ունեցած իր ռազմութի լծակի շնորհիւ:

Սոյն թուականի փետրուարի 9-ին ՌԴ առաջին կարգի պետական խորհրդական, «Ռեկնում» լրատւական գործակալութեան գլխաւոր խմբագիր Մոստեր Զուրկովը «Ֆէյսպուք»-ի իր էջում գրառում է կատարել այն մասին, որ Արցախի ԱԳՆ-ն կարող է լուծարուել Ազդպէճանի պահանջով եւ Փաշինեանի համաձայնութեամբ, իսկ Արցախի արտաքին քաղաքականութեամբ զբաղուելու է անձամբ Արայիկ Յարութիւնեանը, եւ այս հարցում Ռուսաստանի տեսակետը ոչ ոք չի հարցնում: Չարգացնելով այս թեման՝ այնուհետեւ՝ «168 ժամ»-ին տուած հարցազրոյցում նա ուշադրութիւն է հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ Երեւանը լուծ է:

Հարցին՝ կա՛ն ուղիղ բանակցութիւններ հայկական կողմերի եւ Ազդպէճանի միջեւ՝ առանց ՌԴ մասնակցութեան, նա պատասխանել է. «Ի հարկէ, իրենք իրենց քայլերի մեծ մասն անում են առանց Ռուսաստանի: Դա ակնյայտ է: Ոչ միայն սխալում է, այլեւ անբարեխղճօրէն սխալում է նա, ով ասում է, որ Ռուսաստանը ներկայումս լիարժեքօրէն ղեկավարում է իրավիճակը Ղարաբաղում եւ Յայաստանում: Իսկ Ռուսերը Քեչարեանի յայտարարութիւնը, որ Փաշինեանը Յայաստանը դաշնակցից վերածել է Ռուսաստանի հոգատարութեան ենթակայ, ի հարկէ, մաքուր ապակողմնորոշել է: Անելի կ'ասեմ, որ Փաշինեանի Յայաստանը ոչ միայն հոգատարութեան ենթակայ չէ, այլեւ Ռուսաստանի դաշնակցից չէ: Այսպէս աւելի ճիշդ կը լինի ասել:

Ենթադրում եմ, որ Փաշինեանի եւ ազդպէճանցիների միջեւ շփումները շարունակում են: Իմ կարծիքով, դրանք սկսուել են մինչ պատերազմը: Ես ցանկանում եմ ուշադրութիւն հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ իմ գրառման առանցքն ու հաղորդագրութեան իմաստն այն է, որ Ռուսաստանին նրանք չեն տեղեկացրել, եւ որ այդ հարցի ինքնին բնարկուել տեղի է ունենում առանց ՌԴ-ի մասնակցութեան. սա գլխաւորն է, ինչ ես ցանկանում եմ ասել: Մի շարք Նիկոլապետների փորձեցին համոզել ուղիղ հակառակ, որ Ռուսաստանն է դա փորձում անել, ինչը, ի հարկէ, այդպէս չէ»:

Ակնարկին, թէ պատերազմից յետոյ տպաւորութիւն է, որ ինչ որ բան տեղի է ունենում առանց ՌԴ մասնակցութեան, նա պատասխանել է. «Դրանք պարզապէս բաւեր են: Օրինակ՝ յայտնի դէպքը, որ վերադարձրել են Ֆրանսացի լրագրողներին. իսկ ո՞վ նրանց չի տուել մանտաթ, ո՞վ չի տուել թոյլտուութիւն՝ Ղարաբաղ մեկնելու համար:

Շար.ը՝ Է 6

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍԱՄԲՐՈՒԹԵԱՆ ՕՐԿԱՆԸ՝ «ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ»

Յայաստանի Հանրապետութիւնը 2 դեկտեմբեր 1920-ի համաձայնագիրով խաղաղ պայմաններով պետք էր դառնար խորհրդային, սակայն առաջին իսկ օրերէն սկսան դաժան սպանութիւններ, բանտարկութիւններ, աքսոր, թալան ու բռնարարներ: Երկուցուկէս ամիս տեւած այս բռնարարներուն դէմ ժողովուրդը, ՀՅԴ-ի ղեկավարութեամբ, 18 փետրուար 1921-ին ապստամբեցաւ ու տապալեց այս դաժան ու դատադիր իշխանութիւնը:

Հարիր տարի առաջ այս օրը, Փետրուարեան ապստամբութեան յաջորդող օրն

իսկ, շաբաթ, 19 փետրուար 1921-ին լոյս կը տեսնէ Հայրենիքի Փրկութեան կոմիտէի՝ Յայաստանի Հանրապետական կառավարութեան օրկան «Ազատ Յայաստան» օրաթերթի առաջին թիւը (1), կը հրատարակուի 36 օր: Առաջին էջի մեծ տառերով վերնագիրն է՝ «Պղծելիեան իշխանութիւնը տապալուած

Ստեղծուած է Հայրենիքի փրկութեան կոմիտէ - Բանտարկեալ ընկերները ազատուած - Կեցցէ՛ Ազատ, Անկախ Յայաստանը»:

Առաջին էջին վրայ նաեւ մեծ տառերով կը կարդանք կամաւորական երրորդ գունդի հրամանատար Համազասպի (Սրուանձտեանց) դաժան սպանութեան գոյծը: Ան 18 փետրուար 1921-ին բանտին մէջ

դաժանաբար կացինահար եղած էր պղծելիներու ձեռքով, 21 այլ զօրավարներու, կամաւորների, պետական եւ ազգային գործիչներու հետ: Շնորհիւ այս ապստամբութեան՝ բոլոր քաղաքական բանտարկեալները ազատ արձակուեցան:

Թերթը շուրջ մէկ ու կէս էջ բաղկացած է, որ կը բովանդակէ նաեւ.


Ա. Խմբագրական՝ «Պղծելիեան իշխանութիւնը տապալուած» խորագիրով:

Բ. «ԱՃԴ» խորագիրով կը հրահանգուի ժողովուրդին վերադառնալ իրենց բնականոն աշխատանքներուն:


Գ. «Հայրենիքի փրկութեան կոմիտէի հրամաններէն» խորագիրով 9 հրամաններ:

Դ. «Հաղորդակցութեան նախարարութենէն» խորագիրով յայտարարութիւն, ուր նորանշանակ նախարարը կը յայտարարէ, որ հեռագիրը, հեռախօսը, կառատուկը (բոլոր ինքնաշարժներով եւ ծառայութիւններով)՝ զինուորական դրութեան ենթարկուած են, եւ՝ այլ հրահանգներ ու տեղեկութիւններ:

Ե. «Վառելանիւթի յանձնաժողովը լուծուած» խորագիրով հրամանը, ուր կը յայտարարուի պղծելիներուն կազմած վառելանիւթի արտակարգ յանձնաժողովին լուծարումը եւ կը պահանջէ անոնցմէ հաշուետուութիւն եւ չեղեալ կը յայտարարէ անոնց պարտադրած սակերը եւ դէպի Երեւան վառելանիւթ փոխադրելու արգելքը:



Համազասպի կամաւորական երրորդ գունդին զօրահանդէսը Էջմիածին, հաւալային դարպաս, 1914:



Համազասպի սպանութեան գոյծը:

«Այդպէս չորին, սակայն, մեր երկիրը բռնի կերպով ներս խուժած հայ պղծելիները: Անոնք հանդիսաւոր կերպով մեզի խոստացած էին խաղաղ կերպով կառավարել երկիրը եւ ժողովուրդը, ձեռք չտալ ոեւէ մէկուն, նոյնիսկ՝ դաշնակցականներուն, որոնք առանց ընդդիմութեան հրապարակէն քաշուեցան: Սակայն փոխանակ իրենց խոստումը կատարելու՝ կանոնաւոր ալան թալանի ենթարկեցին մեր դժբախտ երկիրը, մեր ցորենը, ալիւրը, որբերուն համար պահուած կաթերն իսկ փոխադրեցին դէպի Ազդպէճան եւ Ռուսիա, անոնք բանտերը բերել բերան լեցուցին, շատերուն տվաճառ քրին, շատերուն գնդակահարեցին, շատ շատերուն աքսորեցին եւ ճանապարհին սպանեցին եւ այս բոլորը՝ յանուն ընկերային յեղափոխութեան...»:


Տակաւին շատ դասեր պետք է քաղենք մեր Ա. Հանրապետութեան պատմութենէն, որուն իւրաքանչիւր օրը՝ անկախութեան ճակատամարտերէն մինչեւ պղծելիեան դաւադրութիւն, եւ փետրուարեան ապստամբութիւն՝ օրինակ պետք է ծառայեն մեզի այժմու կացութենէն դուրս գալու համար:

ՅԱՐՈՒՅ ԶԵՔԻՏԵԱՆ

18 փետրուար 2021
haroutchekjian.wordpress.com

(1) Յայաստանի հանրապետական կառավարութեան օրկան «Ազատ Յայաստան», Ա տարի, թիւ 1, 19 փետրուար 1921, Երեւան:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՈՐՆԵՑԱԲ ԻՐ ԼԻԱԳՈՒՄԱՐ ԱՌՅԱՆՑ ՆԻՍՏԸ



13 փետրուարին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական վարչութեան Զաղաքական ժողովը ունեցաւ իր լիազուժար առջանց նիստը, նախագահութեամբ Արամ Ա. կաթողիկոսին եւ համաատնապետութեամբ Ստեփան Տէր Պետրոսեանի (Լիբանան) եւ Գրիգոր Մահսէրեճեանի (Ապու Տապի)։

Դիւանապետը ընդհանուր գիծերով ներկայացուց նախորդ երկու նիստերու ատենագրութիւններուն գլխաւոր կէտերը, յատկապէս ծանրանալով Լիբանանի հայութեան վերականգնումի, Արցախի պատերազմին յառաջացուցած տագնապին եւ կաթողիկոսութեան մօտեցման, կաթողիկոսարանին կատարած ընկերային ծառայութեան, ինչպէս նաեւ վեհափառին ունեցած եկեղեցական ու պետական շփումներուն։ Ապա հայրապետը լայն գեկոյց մը տուաւ հետեւեալ կէտերուն շուրջ։

Ա. Զակառակ համաճարակին ստեղծած դժուար պայմաններուն, մայրավանքին մէջ, ինչպէս մեր բոլոր թեմերուն, եկեղեցական արարողութիւնները կանոնաւոր կերպով կը կատարուին եւ հոգեւոր խորհրդածութիւններու ու Սուրբ Գրոց սերտողութիւններու ճամբով հոգեւոր սնունդ կը տրուի մեր ժողովուրդի զաւակներուն։ Վեհափառը՝ ընդգծելով կարեւորութիւնը այս աշխատանքներուն, անհրաժեշտ նկատեց, որ անոնք շարունակուին վերանորոգ թափով։

Բ. Կաթողիկոսը ցաւով անդրադարձաւ, որ համաճարակին գոհ զացած են համայնքային պատասխանատուներ եւ ազգայիններ, ինչպէս նաեւ մեր ժողովուրդի զաւակներ՝ գրեթէ բոլոր զաղութներուն մէջ։ Պետական եւ առողջապահական պատասխանատուներուն կողմէ կատարուող թեղադրութիւնները՝ «Զորոնա»-էն հեռու պահելու ձգտող, անհրաժեշտ է որ ամբողջութեամբ յարգուին մեր ժողովուրդի զաւակներուն կողմէ, շեշտեց հայրապետը։

Գ. Զամաճարակին եւ տնտեսական տագնապին ստեղծած կացութիւնը մեզ կը մղէ առաջնահերթ կարեւորութիւն ընծայելու ընկերային ծառայութեան։ Այս ծիրին մէջ կաթողիկոսը գնահատանքով ողջունեց առաջնորդարաններուն եւ համայնքային կազմակերպութիւններուն կողմէ կատարուած մարդասիրական աշխատանքները։ Վեհափառը նաեւ հպանցիկ կերպով անդրադարձաւ նոյն ուղղութեամբ կաթողիկոսարանին աշխատանքներուն, յատկապէս Լիբանանի ու Սուրիոյ մէջ։ Ան նաեւ իր բարձր գնահատանքը յայտնեց այն բոլոր ազգայիններուն եւ թեմերուն, որոնք նիւթապէս կ'աջակցին մեր ժողովուրդի կարիքներուն։

Դ. Լիբանանի հայութեան վերականգնումը հայրապետը նկատեց յոյժ կարեւոր։ Այս ծիրին մէջ անցնող ամիսներուն գործնական քայլեր առնուեցան, յատկապէս վնասուած տուներու վերանորոգման ուղղութեամբ։ Ան իր գնահատանքը յայտնեց նաեւ այս աշխատանքներուն իրենց նիւթական մասնակցութիւնը բերած մեր բոլոր կառոյցներուն, թեմերուն եւ ազգայիններուն՝ Զայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ։

Ե. Անդրադառնալով Արցախի պատերազմին ստեղծած կացութեան՝ վեհափառը յայտնեց, թէ այս ուղղութեամբ իր տեսակետը, եւ բնականաբար, Կիլիկիոյ կաթողիկոսութեան մօտեցումը յստակօրէն արտայայտած է։ Ամեն գնով բեւեռացումներէ հեռու պէտք է պահել Զայաստանը, նոր ընտրութիւն կազմակերպելով եւ նոր իշխանութիւն հաստատելով, միաժամանակ, լծուելով Արցախի անկախութիւնը ապահովելու աշխատանքներուն։

Զ. Կաթողիկոսը յիշեցուց, որ 2021-ը հռչակած է «Արցախի տարի»։ Այս ուղղութեամբ իր հռչակագիրը կարդացուած է մեր եկեղեցիներուն մէջ։ Հռչակագիրին մէջ կը շեշտուի Արցախի կարիքներուն օժանդակելու, ինչպէս նաեւ Արցախի անկախութեան համար յատուկ աշխատանքներ տանելու հրամայականը։

Է. Կաթողիկոսը նաեւ անդրադարձաւ կաթողիկոսարանին դիմագրուած նիւթական դժուարութիւններուն։ Թեմերուն մէջ ստեղծուած տնտեսական դժուարութիւնները, Լիբանանի տնտեսական տագնապը եւ դրամատային կառոյցին յառաջացուցած հարցերը իրենց ժխտական անդրադարձը ունեցան կաթողիկոսարանի տնտեսական կացութեան վրայ։ Զակառակ այս իրողութեան, վեհափառը հրամայական նկատեց թեմերուն կողմէ պոռոհատուրքի գծով յատուկ ճիգ մը կատարելու անհրաժեշտութիւնը։

Ը. Սիսի կաթողիկոսարանին վերադարձի գծով Թուրքիոյ պետութեան դէմ կաթողիկոսարանի դատին անդարառնալով՝ հայրապետը ընդհանուր ակնարկ մը կատարեց վերջին զարգացումներուն եւ թրջական դատարանին կողմէ կատարուած յետաձգումներուն եւ յայտնեց, որ դատի թուական ճշդուած է 21 մարտ 2021-ը։

Թ. Վեհափառը գոհունակութեամբ յայտնեց, որ հակառակ գործնական դժուարութիւններուն, կաթողիկոսարանին մէջ հաստատուած հայագիտական եւ մանկավարժական կեդրոնները կը գործեն առջանց։ Դպրեվանքը, «Թոշնոց Բոյն»-ը, Ազգային ծերանոցը եւ Ազգային բուժարանը բնական կերպով կը շարունակեն կատարել իրենց աշխատանքները։ Կաթողիկոսարանը եւս կը շարունակէ իր աշխատանքները։

Ժողովականներուն կողմէ տրուած կարգ մը հարցումներուն կաթողիկոսը յաւելեալ լուսաբանութիւններ տուաւ։ Ժողովականներ նաեւ թեմերուն վերաբերող կարգ մը մտահոգութիւններու եւ երեւոյթներու անդրադարձան։ Ապա, ժողովականները իրենց գնահատանքը եւ շնորհակալութիւնը յայտնեցին հայրապետին առաջնորդութեամբ թէ՛ կաթողիկոսարանին, եւ թէ թեմերուն կողմէ կատարուող յարաբերական, վարչական աշխատանքներուն ու յատկապէս մեր ժողովուրդի կարիքներուն հասնելու ճիգերուն։

ԴԻՄՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԵՌԱԲԼՈՒՐԷՆ ՀՐԱՊԱՐԱԿ



«Մարդիկ իրենց 20-ամեակի տարեդարձները **ռեստորաններում** են տօնում, մենք եռաբլուրում ենք, բալէս...: Մարդիկ իրենց 20- ամեայ տարեդարձները **ռեստորաններում** են տօնում, բալէս, իսկ մենք՝ եռաբլուրում, բալէս, ա՛խ, բալէս, ցաւդ տանեմ, բալէս...»։

Ողբացող մօր հեկեկանքին ձայնը ձիւնախառն մրրիկին հետ եկաւ ու ոսկորներն ծակեց...

Նորօրեայ նահատակ, հայրենադարձ երիտասարդ Կարօ Յովակիմեանի բառասունքին առթիւ հաւաքուածներն մեր հայեացքները մեզմէ քանի մը գերեզման հեռու, ծնրադիր տղուն նկարը շոյող մօր ուղղեցինք ու բնականաբար աւելի յուզուեցանք... Տղուն տարեդարձն էր փաստօրէն... Երեք հոգիով եկած էին «տարեդարձ նշելու»։

Քանի մը վայրկեան ետք, անըստաւելիօրէն, մեր խումբէն մէկը երգելու կը սկսի. «Ախ ֆետայիներ, ջան ֆետայիներ, ձեր մայրերը ձեզ դուրպան, Մշոյ Սուլթան Սուրբ Կարա, Կարապետ, թող, թող...»։ Կարոյին մեծ հայրն է, որ երգով փորձեց իր վիշտը արտայայտել, բայց վիշտը խելոյցէ ծերունիին կոկորդը, ու աչքերէն հոսող արցունքները արտասուքի վերածուեցան։ Լացինք բոլորս, տղամարդի՛կ ու կանա՛յք, հայաստանցիք ու սփիւռքահայեր, լացինք միասնաբար՝ Ձիւնը կը շարունակէր տեղալ, կը տեղար առատօրէ՛ն, կարծես մեր այրող հոգիները կ'ուզէր զովացնել։ Ցաւի, ողբի ու անփութանքի կրակ կայ մեր հոգիներուն մէջ։

Միայն ինկզ գոյն կը գերիշխէ եռաբլուրին վրայ՝ իւրաքանչիւր գերեզմանի վրայ բարձրացող եռագոյնը, կարմիր ու սպիտակ մեխակները, սեւ տապալանքարերն ու ամեն ինչ ծածկող ձիւնի սպիտակը։ Գոյներու այս համադրումին մէջ բազմաթիւ մարդոց եռուզեռ կայ, լուռ, բայց նեղացուցիչ

Ահաւոր ծանրութիւն մը կուրծքս պատած, շնչելու դժուարութեամբ կը հասնիմ՝ մեքենայիս ու կը փորձեմ դուրս գալ եռաբլուրէն։ Բլուրէն դէպի պողոտայ տանող ճամբու աւարտին ճանապարհային ոստիկանները դուրս ելլել փորձող մեքենաները կը կեցնեն ու յանկարծ ինքնաշարժներու շարափին մը ներս կը մտնէ։ Ըստ երեւոյթին, նահատակի մը յուղարկաւորութիւնն է։ Զայաստանեան տիպիկ «Նիվա» մեքենաներ, իւրաքանչիւր մեքենայի առջեւ մեխակներով մեծ տառ մը զըրւած ու բարձրացուած է։ Կը սկսիմ կարդալ՝ առաջին մեքենային վրայ՝ Հ, երկրորդին՝ Ա, երրորդին՝ Մ, չորրորդին՝ Ո, հինգերորդին վրայ տառ չէ գրուած, այլ թուական՝ 2000 ու ետեւէն շտապ



օգնութեան մեքենայ մը, ապա սովորական տասնեակ մեքենաներ։

Պատերազմէ գրեթէ չորս ամիսներ ետք, տակալին եռաբլուրի մէջ օրական դրութեամբ մեր անմահացած տղոց յուղարկաւորութիւններ տեղի կ'ունենան... Զորս ամիս ետք օրական



եռուզեռ, ինչո՞ւ այսքան մարդ կայ այստեղ, ինչո՞ւ այսքան մարդ պէտք էր ըլլար այստեղ...

Հարազատներով կ'ողջագուրուիք ու մեր ճամբան կը բռնենք դէպի դուրս։ Ու ահա մեր դիմաց հայր ու մայր մը կը բալեն գլխիկըս ու արցունքոտ աչքերը։ Հայրը իր մէկ ձեռքով մեծ շրջանակ մը կուրծքին սեղմած, միւս ձեռքով ցաւէն կքած կնոջ ձեռքէն բռնած՝ կը քալէ մեր ուղղութեան հակառակ։ Շրջանակին նկարին կողմը ալեւեր մարդուն կուրծքին սեղմուած է, չեմ տեսներ ո՛վ ըլլալը։ Վստահաբար նահատակ տղուն նկարն է։ Շրջանակը պիտի տանի ու տապալանքարին վրայ հանգչեցնէ՝ հազարներ հաշուող պայծառ դէմքերուն կողքին աւելնալով։

Ամբողջ սրտովս կ'ուզեմ տեսնել նահատակին նկարը, բայց հայրը այնքան ամուր տեղմած է կուրծքին, որ թեւէ դիտմամբ ճի՛շդ քովէն կ'անցնիմ ու անմիջապէս ետեւ կը նայիմ տեսնելու նկարը, պիտոս, բան չեմ տեսնել։ Կարեւոր չէ... բոլորը անխտիր մեր լուսաւոր տղաքն են...

թաղում կայ եռաբլուրի մէջ, անհաւատալի ու նոյնքան ցաւալի... իսկ հիմա 2000-ին ծնած ՀԱՍՕ-ին յուղարկաւորութիւնն էր...:

Եռաբլուրէն դէպի «Ազատութեան» հրապարակ կը հասնիմ ու կը միանամ այս ողբերգութեան վերջ տալու եւ մեր կոտորուած մեքքը շտկելու ձգտող հազարներու հանրահաւաքին։ Ցաւի, ողբի, կորուստի, յուսահատութեան եւ անփութանքի զգացումները մէկ կողմէ, կ'ալեկոծեն ամբողջ Եւրօբլինս։ Եռաբլուրին ու հրապարակին միջեւ հիմապիսի հասարակ յայտարար մը կը փորձեմ գըտնել ու երկար փնտռուի՜ք ետք կը գըտնեմ այդ։ Հիմաական յայտարարը լուսաշող նահատակներուն եւ ցուցարարներուն ԱԶԵԵՐՆ Էին, որոնցմէ մէկ ու յստա՛կ պատգամ կու գար՝ ՊԱՅՁԱՐԻԼ։

ԳԵՈՐԳ ՅԱԿՈԲՏԵԱՆ

20 փետրուար 2021 - Երեւան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՅԼ ԵՒ ՈՉ ԹԷ ԶԻՋՈՒՄ



Ռուսիոյ եւ Թուրքիոյ պաշտպանութեան նախարարները 11 նոյեմբեր 2020 թուականին ստորագրեցին Արցախի մէջ զինադադարի հսկողութեան ռուս-թրքական միացեալ կեդրոնի հաստատման վերաբերեալ յուշագիր մը։ Կեդրոնը սկսաւ գործել 30 յունուար 2021-ին։ Կեդրոնի բացման մասնակցեցան՝ Ազրպէյճանի պաշտպանութեան նախարար Չաքիր Յասանովը, Ռուսիոյ պաշտպանութեան փոխնախարար Ալեքսանտր Ֆոմինը եւ Թուրքիոյ պաշտպանութեան փոխնախարար Եւուսու Էմին Զարաօսմանօղլուն։

Ուշագրաւ էր, որ Պաքուն իր հարցին վերաբերող եւ «իր հողին» վրայ տեղակայուելիք այդ կեդրոնի շուրջ բանակցութիւններուն ու համաձայնութեան մասնակից չեղաւ, այլ միայն՝ բացման արարողութեան։ Ազրպէյճան ձեւականին ներկայ էր, սակայն ոչ՝ խորքայինին։ Երեւոյթ մը, որ կու գայ վկայելու, թէ Արցախեան Բ. պատերազմը ժխտական ազդեցութիւն ունեցած է ազրպէյճանական գերիշխանութեան վրայ, եղափոխուած է «երկու պետութիւն՝ մէկ ազգ՝ հայեցակարգը եւ խիստ մօտեցած՝ «մէկ պետութիւն՝ մէկ ազգ»-ին. այլ խօսքով, 44-օրեայ պատերազմը կարելի դարձուց փանթուրանական ծրագիրի իրագործման ուղղութեամբ այդ առաջին քայլը, որուն արժեքը, սակայն, մասամբ նուազեցաւ։ Արցախի մէջ ռուսական զինուորական միջամտութեան նշորհիւ։

Կեդրոնի հաստատումը շատերու կողմէ մէկնաբանեցաւ՝ իբրեւ Ռուսիոյ կողմէ Թուրքիոյ զիջում։ Ասիկա չափազանցութիւն է։ Իրողութեան մէջ Ռուսիոյ կատարածը ընդամենը քաղաքական քայլ էր, որովհետեւ Ռուսիան չէր կրնար հաշուի չառնել Թուրքիան՝ նկատի ունենալով սեպտեմբեր 27-ին շղթայագերծուած յարձակումին մէջ անոր առանցքային դերակատարութիւնը. ուստի կարելի չէր, որ 44-օրեայ պատերազմի աւարտէն ետք անոր մասնակցութիւն չունեցած Մոսկուան վերցըներ աւարին առիւծի բաժինը, իսկ Թուրքիան ոչինչ ստանար։ Քրեմլին Անգարային նետեց ոսկորի փոքր կտոր մը՝ Լեռնային Ղարաբաղի մէջ զինադադարի հըսկողութեան ռուս-թրքական միացեալ կեդրոնը։

Ռուսիոյ Անվտանգութեան խորհուրդի փոխնախագահ Տմիթրի Մետվետն 1 փետրուարին մէկնաբանելով թրքական ներկայութիւնը՝ նշեց. «Թուրքիան մեր դրացին է եւ շատ կարեւոր գործընկեր է։ Եւ շատ մտերիմ երկիր է Ազրպէյճանի համար։ Այդ գործօնը կարելի չէ հաշուի չառնել»։ Ան պատասխանելով ռուս լրագրողի մը հարցումին, թէ արդեօք Ազրպէյճանն է Զայաստանի տագնապին մէջ Թուրքիոյ դերը չի՞ վախցնէր Ռուսիան, ԸՏԱՆ. «Ասիկա նոյնպէս ընդհանուր կայունացման տարր է։ Սակայն ես ասիկա չէի գնահատէր իբրեւ երկարաժամկետ քաղաքականութեան տարր կամ դաւարողութեան տեսութիւն չէի կառուցեց»։ Այլ խօսքով,թրքական ներկայութիւնը եւ ընդհանրապէս կեդրոնի գոյութիւնը նկատեց ժամանակաւոր երեւոյթ։

Արցախի մէջ «խաղաղապահ ուժեր» պիտակին տակ բազմափող հրթիռային համակարգեր, ելեկտրոնային պատերազմի սարքեր եւ մասնաւորապէս ուժեղ տեղակայած Մոսկուան առաջին օրէն կտրուկ կերպով մերժեց Լեռնային Ղարաբաղի մէջ թուրք զինուորներու ներկայութիւնը, ուստի պահանջեց, որ հսկողութեան կեդրոնը հաստատուի Արցախէն դուրս՝ առաջարկելով զայն հաստատել Գանձակի կամ Պարտայի մէջ, սակայն թրքական եւ ազրպէյճանական կողմերը առարկեցին, որ այդ վայրերը շատ հեռու են, եւ պնդեցին, որ կեդրոնը տեղակայուի Արցախի մէջ։

Քրեմլին իր բանակը Արցախի ոչ բռնագրաւուած տարածքներուն մէջ արագօրէն տեղակայելով՝ կանխարգիլեց Լեռնային Ղարաբաղի մէջ թրքական բանակի ներկայութիւնը։ Անգարան շուտով հասկցաւ, որ այդ ընտրանքը բացառուեցաւ, որովհետեւ այդպիսի քայլ մը արկածախնդրութիւն մըն է, որ անխուսափելի կը դարձնէ զինուորական ուղղակի բախումը, որ կողմերէն ոչ մէկը կ'ուզէ։ Ռուսական **փորձմիջիւն սթրաթեճ**՝ կանխարգիլիչ հարուածը չեզոքացուց Զայաստանի համար իր արեւելեան եւ արեւմտեան սահմաններուն վրայ ՕԹԱՆ-ի 2-րդ մեծագոյն բանակին ներկայութեան վտանգը։

Ի վերջոյ ռուս-թրքական հսկողութեան միացեալ կեդրոնի վայրը դարձաւ Աղտամի շրջանի Մարգիլի գիւղը, որ կը գտնուի Արցախ-Ազրպէյճան շփման գիծէն 8 քիլոմետր հեռաւորութեան վրայ, Արցախի Զանապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտէն ուղիղ գիծով շուրջ 30 քիլոմետր հեռաւորութեան, իսկ ինքնաշարժով 41 քիլոմետր հեռաւորութեան վրայ. այլ խօսքով՝ ռուսական կողմի կամքին համահունչ՝ Լեռնային Ղարաբաղէն դուրս։

Անգարայի կողմէ ռուսական պայմանի ընդունումը ցոյց կու տայ, թէ Թուրքիան շատ լաւ կը հասկնայ, որ Զանապետի Կովկասի եւ մասնաւորաբար Արցախի մէջ գլխաւոր դերակատարը կը շարունակէ մնալ Ռուսիան։

10 փետրուարին,Թուրքիան Սեւ ծովու մէջ Միացեալ Նահանգներու հետ կատարեց միացեալ ռազմափորձեր, որոնց մէջ կարելի է տեսնել Արցախի հարցով ռուս-թրքական բանակցութիւններուն արդիւնքին հետ կապ մը։ Ռազմափորձերը Ռուսիոյ դէմ ուղղած էին, իրողութիւն մը, որ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանքեր Մարիա Չախարովա 18 փետրուարին իր ամբողջ ատուկիսին ընթացքին նկատեց. «Բոլորին համար՝ ակնյայտ»։ Զակառակ Ուաշինկթընի հետ իր բազմաթիւ լուրջ խնդիրներուն՝ Թուրքիոյ հակառուսական այդ ռազմափորձին մասնակցութիւնը ընդամենը զայրոյթի արտայայտութիւն մըն է, իր թափած մեծ ջանքէն ետք, մետաւայտերորդ պահին իր որսացած «համեղ սաղմոն»-ը ռուսական արջին կողմէ խլուելուն պատճառով ակռայի կրճտում մը։

ՎԱԿՐԱՍ ԷՄՄԻՆԱՆ

ԱԶԴԱԿ

ԱՆՐԱՎԱՐՁ

ՄՓԻՒՌ

ԻՐԱՎԻՃԱԿ, ՀՆԱՐԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Իրավիճակ

Չայկական սփիւռքը ունի ներքին զարգացումներ, որոնք սկիզբ ու թափ առած են մեծ գաղթէն ետք տարբեր երկիրներ հասած ու այդտեղ կազմաւորուած համայնքներու տեղական առանձնայատկութիւններու համաձայն։

Կազմուած են արեւելեան համայնքներ, ուր լեզուն, մշակոյթը, աւանդութիւնները աւելի ամուր ու կայուն հիմերու վրայ դրուած են, եւ ուր տեղական միջավայրին հետ շփումն ու անոր մէջ ծուլումը աւելի դժուար եղած են, քան՝ արեւմտեան, լատին-ամերիկեան կամ նախկին խորհրդային երկիրներու մէջ, ուր եւս ծաւալած են նախապէս աւելի հարուստ, բայց հետզհետէ մաշուող ու հիւծուող մշակութային, կրթական գործունեութիւններ, բայց ուր հայօրէն մտածողներու ու ապրողներու թիւը, համեմատած «ծագումով հայերու» հետ, տասնամեակ առ տասնամեակ նօսրացած է։

Այստեղ պէտք է նշել հայու տեսակի նաեւ երանգներու երեւոյթը, որ կը տարբերի՝ ըստ բնակութեան երկրի ու ըստ ընտանեկան կամ ընկերային միջավայրի. կայ ներգործօն, կազմակերպական կեանքին մէջ ներգրաւուած, քիչ ներգրաւուած կամ չներգրաւուած, յաճախակի կամ հազուադէպ մասնակցութիւն ունեցող, միայն ընտանեկան միջավայրին մէջ հայեցիութիւնը ապրող, հայերէն խօսող, բայց հայերէնով չմտածող ու չստեղծագործող հայը... Եւ այսպէս՝ շարունակ։ Ու ասոր պէտք է ւաւելցնել սփիւռքին ու հիմնականին մէջ արեւմտեան երկիրներու սփիւռքներուն նոր դիմազին բերող Չայաստանէն արտագաղթած հայրենակիցներու վերջին տասնամեակներու փաղանգները, որոնք տեղ-տեղ առանձնացած կ'ապրին՝ չխառնուելով դասական սփիւռքին հետ, տեղ-տեղ ստեղծած են մշակութային-կրթական առայժմ համեստ կառոյցներ (նա՜յած երկրի), բայց որոնք միաժամանակ ցոյց կու տան իրենց լուրջ մասնակցութիւնը Ապրիլ 24-եան կամ Արցախի ի նպաստ կազմակերպուած գործունեութեանց, օգնութեանց ու ցոյցերուն։

Պէտք է ողջունել ու ըստ արժանւոյն գնահատել ծուլման ճանապարհին կամ առնուազն անտարբեր թուացող հայերու վերջին տասնամեակներուն շօշափելի վերածնունդն ու ազգային պատկանելիութեան զգացումի անբարդոյթ դրսեւորումը՝ ազգունով յատուկ ժամանակաշրջաններու դէպքերէն, ինչպէս՝ 88-ի երկրաշարժը, 90-ականներու արցախեան ազատամարտը, 2016-ի քառօրեայ պատերազմը, 2018-ի իշխանափոխութեան բերած նոր Չայաստանի յոյսերը եւ, վերջապէս, արցախեան վերջին պատերազմը՝ իր գոհերով, հողային կորուստներով ու ընկճուածութեամբ միասին։

Պէտք է սփիւռքի հասկացողութեան մէջ ներգրաւել նաեւ, յատկապէս՝ դասական սփիւռքի մտքին մէջ, խորհրդային նախկին տարածաշրջանի, արեւելեան եւ կեդրոնական Եւրոպաներու, նաեւ Ճայրագոյն Արեւելքի երկիրներու, նոյնիսկ ասիրիեան որոշ երկիրներու համայնքները, ըլլան անոնք մեծաթիւ կամ փոքրաթիւ, նորաստեղծ թէ հին։

Ու կարելի է միանգամայն յայտարարել, որ մենք ունինք հարուստ ներուժով, լայն, բայց ըստ արժանւոյն չարժեւորուած հնարաւորութիւններով աշխարհածաւալ սփիւռք մը։

Սփիւռքը նաեւ կազմակերպուած կեանք է՝ կառոյցներ, ղեպրոցներ, մշակոյթի կեդրոններ, եկեղեցի, կուսակցութիւններ ու բարեփոխական, երիտասարդական, արիեստագիտական խցմբաւորումներ։ Սփիւռքը, չմոռնանք, պատմութիւն է, դէմքեր են դէպքեր։ Սփիւռքը յատկապէս Չայաստանի համար բաբախող սիրտ է։ Սփիւռքը, ի վերջոյ, ապագայ է, նոյնիսկ երբ շատերը զայն պատկերացուցած են որպէս մաշուող ու ծուլուող ժամանակաւոր իրականութիւն։

Այս հպանցիկ են ընթերցողներէն շատերուն ծանօթ ներկայացումը օգտակար սեպեցի նախքան սփիւռքի հետ կապուած մեր պատկերացումներուն եւ անկէ մեկնած՝ անկկալութիւններուն ու անոնց բնոյթին ու որոշ նպատակներուն մասին մտածելն ու գանձնք իրագործելու ճանապարհի մասնակի նմուշներ ներկայացնելը։

Հնարաւորութիւններ

Հիմնականին մէջ արհաւիրքի ու մեծագոյն կորուստներու հտեանք սփիւռքը վերածուած է բանական կան ուրակական առաւելութեան մը, նախ՝ ազգի մէկ հատուածը պահպանելու ու անոր կենսաբանական ու յատկապէս մտաւոր ու մշակութային զարգացումը ապահովելու առումով, որուն պէտք է գումարել խորհրդային Չայաստանի մէջ սնած ու Չայաստանի Հանրապետութենէն եկած հայրենի ժողովուրդի բերած լեզուի (անկախ տարբերութենէն), մշակոյթի, ինչպէս նաեւ աւանդութիւններու ու սովորութիւններու ժառանգութիւնն ու ստեղծագործութիւնները։ Միասին անոնք կը կազմեն մեր յառաջդիպ տասնամեակներու սփիւռքեան ու համահայկական ուժի եւ ինքնադրսեւորման ողնասիւնը։ Այդ առաւելութիւնը, որ յատուկ չէ թէւ միայն հայ ժողովուրդին, այն պատուանդանն է, որուն վրայ պէտք է կառուցել «հզօր Չայաստան, հզօր հայու թիւն» իրականութիւնը՝ ոչ միայն հայաստանակեդրոն դրուածքով, այլ նաեւ՝ սփիւռքը ամրացնելու, վերակազմակերպելու, առողջ եւ որակեալ մարմինի մը վերածելու համար։

Թթէ փորձենք արագ հայեացքով մը գնահատել մեր սփիւռքի հնարաւորութիւնները, կը տեսնենք, թէ ունինք արիեստներէն մինչեւ գիտական, ռազմականէն մինչեւ մարզական, կըրթականէն (ու ոչ միայն հայ կրթութիւն) մինչեւ մշակութային (ու ոչ միայն հայ մշակոյթ), գործարարականէն մինչեւ արիեստագիտական առեղել ջանակութեամբ ու մեծ փորձառութեամբ մարդիկ՝ տարբեր տարիքի ու տարբեր աշխարհագրական վայրերէ, որոնք, սակայն, առաջին հերթին գիրար ճանչնալու ու միասին համագործակցելու հորիզոնական հարթակներ կամ միջավայր չեն ունեցած։ Միւս կողմէ, սոյն մարդիկ ունին իրենց զբաղուածութեան եւ մասնակցութեան չափը, ունին իրենց տեղական մտայնութիւնները, ունին իրենց մտավախութիւններն ու երբեմն նախապէս ունեցած ծախողած փորձը։ Ուստի, անհրաժեշտ է անհատներու նկատմամբ, ըստ տեղի, մասնագիտութեան, նոյնիսկ՝ տեսակի, յատուկ վերաբերմունք ցուցաբերել, քանի նպատակը սիրով, համոզումով այդ մարդիկը ներգրաւելն է հաւաքական պատկանելիութեան ու ընդհանուր գործին մէջ։ Նոյնիսկ եթէ այդ ներգրաւումը պէտք է, տեղ մը, շահաւետ ըլլայ անոնց համար, ըլլայ այդ զգացական մակարդակի՝ օգտակար դառնալու զգացում, հպարտութեան, զօրակցութեան ապրում (solidarité), կամ՝ գործնական ու կիւթական մակարդակի վրայ, ինչպէս՝ նոր կապեր հաստատել, նոր դռներ բանալ ու սեփական գործը յառաջ մղել։

Անկկալութիւններ

Ի՞նչ խնդիրներ պէտք է լուծէ սփիւռքը թէ՛ իրեն համար, թէ՛ Չայաստանի համար, եւ որո՞նք են անոր սահմանափակւելներն ու դժուարութիւնները։ Նշեմ կարգ մը մարտահրաւերներ՝ ընդունելով, որ իւրաքանչիւրս կրնայ ունենալ տարբեր առաջ-

նահերթութիւններ։ Բայց նախապէս նշենք, որ հզօր ու յարատեւ պետութեան գոյութիւնը կ'անցնի, ի վերջոյ, հայրենադարձութեան միջով. սա հարցերու հարցն է։ Մինչ այդ ու միաժամանակ մենք ունինք, օրինակ, Չայաստանի եւ հայու հեղինակութեան բարձրացման օրակարգ, հայապահպանման տարածման եւ ամրացման, աւելին՝ հայ ինքնութեան նորովի զարգացման օրակարգ, դպրոցական համակարգի զարգացման օրակարգ՝ թէ՛ ցանցի եւ թէ՛ ծրագրերու առումով, սփիւռքի անհատական եւ հաւաքական կարողութիւններու պեղման, հաւազագրման եւ ի գործ դնելու օրակարգ, ծնելիութեան քաշալերում, այո՛ր, նոյնիսկ սփիւռքի մէջ, միջսփիւռքեան համագործակցութիւններու ստեղծում, մասնակցութիւն՝ Չայաստանի պետական թէ՛ կեդրոնական եւ թէ՛ տարածքային ծրագրերուն՝ գիւղական միջավայրի զարգացումէն մինչեւ մշակութային ստեղծագործութեան միջազգային հանրութեան ներկայացում, տնտեսական-ներդրումային ծրագրերէն մինչեւ արտահանման խթանում ու նոր շուկաներու բացում, արտաքին քաղաքականութեան աջակցումէն մինչեւ առողջապահական համակարգի հզօրացում ու մարդասիրական ծրագրեր, գիտութեան ու կրթութեան որակական ոստումէն մինչեւ այդ ոլորտներու համար համապատասխան միջազգային համագործակցութիւններու ստեղծում։

Այլ առիթներով կարելի է մանրամասն քննարկման յանձնել իւրաքանչիւր առաջարկ, ինչպէս, օրինակ, կրթական ոլորտէն ներս դնաազիրներու կամ հայերէնի ուսուցիչներու պատրաստման խնդիրը, արտաքին քաղաքականութեան մէջ՝ քարոզչական բանակի ստեղծման ու **լուպիկնկի** արդիւնատուութեան բարձրացման խնդիրը կամ տնտեսութեան մէջ՝ զբօսաշրջային ենթակառոյցներու զարգացման, փաթեթներու ձեւաւորման ու զբօսաշրջիկներու թիւի աճի խնդիրը, եւ այսպէս շարունակ։

Այլ խօսքով, մարտահրաւերները բազմաթիւ են ու բազմաբնոյթ։ Գործ կայ, սիրելիներ։

Սփիւռքի մեծագոյն խնդիրներէն մէկը իր քարացած, կաղապարուած եւ ինքնամաշումի տակող նախորդ դարաշրջանի մեքանիզմներով աշխատիլն է... 21-րդ դարու։

Սփիւռքը կը ղեկավարուի իր տարբեր կառոյցներուն մէջ եւ տարբեր մակարդակներու վրայ հսկմաշ մեթօններով, որ կը բախի այդ կառոյցներուն ու անոնց գործելաոճին հետ արիեստավարժ ու աշխարհին բաց, որակեալ մարդկոց ու յատկապէս երիտասարդութեան անհամապատասխանելիութեան լուրջ խնդրին։ Վերջիններս երբեմն կը գտնուին նոյն այդ կառոյցներէն ներս ու ճարահատեալ՝ իրենց նպաստը կը փորձեն բերել հսկմաշ մեթօններուն ենթարկուելով, յարմարուելով՝ պարտականութեան զգացումէն թելադրուած։ Անանկական կառոյցները աւանդական մնացած են բառին լիիրաւ իմաստով։ Եւ նոյն այդ կառոյցներն ու իրենց անկակաճեղիորէն նուիրեալ, բայց ներկայ մարտահրաւերներուն չհամապատասխանող ղեկավարողներն ու գործունեայ անդամներն են, որոնք յաճախ հրապիրուած են առաջարկելու նոր մօտեցումներ վաղուան սփիւռքին մասին։ Լաւագոյն պարագային, անոնք սահմանափակ զեղազիտական բարեկարգումներ կը կատարեն, երբեմն այդ ղեկավարներէն երկու քայլ անդին գացած, աշխարհի մէջ երկու բան աւելի տեսած այլ ղեկավարողի մը առաջարկ-ծրագիրը որպէս գլուխ գործոց սեպած՝ զայն յառաջ կը մղեն ժամանակի մը համար մրճահարելով, որ ահա այն է ելքը, մինչեւ որ այդ օրակարգը ինք եւս կորսնցնէ օրաւն հրապիրը ու անցնին նոր օրակարգերու։

Իսկ ի՞նչ կարող է տալ ամուր սփիւռքը մեզի եւ ինչպէ՞ս վերակազմակերպել զայն (հասկնալ՝ reengineering)։

Ազգային տեսլական

Բայց, նախ, ճշդելու համար, թէ որո՞նք են մեր անկնկալութիւններ սփիւռքէն, կայ լրջագոյն խնդիր, թէ՛ ո՞րն է մեր ազգային (պետական ու համազգային), տեսլականը՝ doctrine: Ունի՞նք։ Թե՛ հռչակուած «2050-ին պէտք է 5 միլիոն ըլլանք Հայաստանի մէջ, թէ՛ պիտի ունենանք միլիառներ արժող սթարթափներ, կամ թէ եւրոպական ֆութպոլի խխոյեանութեան Չայաստանի հաւաքականը պէտք է ախոյեան համդիսանայ»-ն կ'ամփոփէ մեր այդ տեսլականը։

Աւելի լուրջ ու աւելի գործնական բանածելում է պէտք, որ անպայման կ'ենթադրէ գործողութիւններու յստակ ծրագիր, որ կը ճշդէ մեր ինչպիսին ըլլալը, ինչ տեղ գրաւելը համաշխարհային ռազմական, գիտական, արիեստագիտական, կըրթական, տնտեսա-ֆինանսական, մշակութային ու քաղաքական քարտեսիւն վրայ։

Իսկ գործնական

Ամէ պարագայի սփիւռքը Չայաստանի համար արդէն կատարած է տարբեր բնոյթի գործողութիւններ՝ պետութեան հետ համակարգուած թէ ոչ, ու սա եղած է եւ այսօր ալ կը ներկայացնէ գնահատելի ներդրում։ Ըլլայ այդ դուրսը՝ Չայաստանի պետական-քաղաքական շահերը պաշտպանող ոչ պետական կառոյցներու, ինչպէս՝ Չայ դատի գրասենեակներու, կամ ներսը՝ մարդասիրական օգնութեան, զբօսաշրջային այցելութիւններու կամ գործարար ներդրումներու, ինչպէս նաեւ շօշափելի, բայց անբաւարար թիւով հայրենադարձութեան եւ այլ ճամբով։

Բայց սփիւռքը, այլապէս կազմակերպուած սփիւռքը, աւելի մեծ հնարաւորութիւններ կրնայ ի գործ դնել Չայաստանի ազդեցութեան ու շահի պաշտպանութեան մէջ, ՀՀ օրուան արտաքին քաղաքականութեան խնդիրները ճիշդ հասցետարեւրուն հասցնելու, նաեւ՝ այլընտրանքային ճանապարհներով։ Երախտապարտ պէտք է ըլլալ ցայսօր տարբեր կազմակերպութիւններու կողմէ տարուած Հայ դատի աշխատանքներուն համար եւ զանոնք հինք նկատել վաղուան խորացումն եւ ընդլայնումած ծրագրերուն համար։ Միաժամանակ պէտք է խստովանիլ եւ առարկայականօրէն ընդունիլ, որ հայ ժողովուրդի գոյութենական ու զարգացման խնդիրներուն դիմաց կարիք կայ պատրաստելու յաւելեալ ուժեր՝ վերապատրաստելով զանոնք ու համապատասխան գործիքակազմ ստեղծելով. այս բոլորը՝ հայանպաստ ձգտումնալից քաղաքականութիւններ նախապատրաստելու ու ապահովելու նպատակով։

Սփիւռքը մեր տկար, սակաւաթիւ ու թոյլ արտաքին կառոյցներուն, դեսպանութիւններուն կողքին, մասնագիտական տաղանդներ կրնայ հայթայթել՝ օգնելու արտաքին քաղաքականութեան ընդհանուր թէ յատուկ ծրագիրներու իրագործման գործին մէջ, ծրագրաւորումէն մինչեւ կիրարկում։ Տեղական լեզուամտածողութիւն, կապեր, տնտեսական առաջարկներ, դէպի Չայաստան աշխատանքային այցեր, Չայաստանի հետ տուեալ երկրի մշակութային, կրթական, գիտական եւ այլ բազմաթիւ ոլորտներու մէջ համագործակցութիւն. ահա՛ այն քանի մը օրինակները միայն, որոնք միութենական ու հասարակական

ջանքերու կողքին ու անոնց հետ համադրելով, համակարգըւած ճիգով նոր մակարդակներու պէտք է տանին միջպետական հայանպաստ կապերը։ Սա կ'ենթադրէ, անշուշտ, դեսպանութիւններու աշխատակազմերու վերապատրաստում, արդիւնաւետ եւ որակեալ կառավարում, որ մեր նոր պետականութեան օրերուն ընհանրապէս պակասած է (առանց ընդհանրացումներ կատարելու բոլոր ժամանակներու բոլոր դիւանագետներուն հասցէին), որմէ յետոյ միայն հնարաւոր կը դառնայ ի գործ դնել վերոնշեալ մօտեցումները։

Վերցնենք մէկ օրինակ՝ տնտեսականը։ Աշխարհի պատմութիւնը կը վկայէ, որ, ի վերջոյ, ծաւալապաշտութիւնը եւ ընդհանրապէս արտաքին քաղաքականութիւնը, բացի զուտ քաղաքական եւ ռազմական մղումներէն, ազդեցութեան տարածումէն, նպատակ կը հետապնդէն ձեռք բերել տնտեսական շահեր։

Աշխարհի մեծ ու փոքր պետութիւններ ունին տնտեսական եւ առեւտրական զարգացման գրասենեակներ՝ տասնեակ երկիրներու մէջ։ Վերջին տարիներուն, որոշ երկիրներու պարագային, տնտեսական զարգացման այդ կեդրոնները հետզհետէ սկսան աւելի թիրախային գործունեութիւններ ծաւալել, շատ յաճախ՝ տուեալ երկրի դեսպանութեան հետ միասին, նոյնիսկ՝ դեսպանութիւններէն ներս։ Այսպէս է, որ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութիւնը քանի մը տարի առաջ վերանուանեցաւ նաեւ միջազգային զարգացման նախարարութիւն, որուն հիմնական գործառնոյթներէն մին տնտեսական զարգացման ապահովումն է։ Ահա այստեղ, խելացի համագործակցութեամբ, Չայաստանի վերաշխուժացած Առեւտրական պալատն ու անոր վերաթարմացած միջազգային ներկայացուցչութիւնները (կամ համապատասխան այլ կառոյց), մասնակցութեամբ սփիւռքի գործարար եւ արիեստավարժ մարդոց ու ՀՀ դեսպանութիւններու, այլ խօսքով՝ ՀՀ արտաքին գործոց եւ տնտեսութեան նախարարութեանց համակարգումով, կրնան յառաջ մղել Չայաստանի տնտեսական զարգացման ծրագրերը՝ նախատեսուած արդիւնքներ ձեռք ձգելու յըստակ մտադրութեամբ։

Այլ խօսքով, պէտք է նորովի մտածել ներգործօն եւ համադրեալ գործակցութեան ընդհանուր եւ ոլորտային ռազմավարական ծրագիրը։ Ինչպէս տնտեսականին համար, նոյն մօտեցումը կարելի է կիրարկել, ոլորտային իւրայատկութիւնները նկատի առնելով անշուշտ, մշակոյթի, կրթութեան, գիտութեան – բազմաթիւ այլ ոլորտներու համար։

Սփիւռքի վերակազմակերպման ծրագիրն ու Չայաստան-սփիւռք համագործակցութիւնը պէտք է դիտել որպէս սփիւռքի ներդրում, մասնակցութիւն ի նպաստ Չայաստանի, բայց նաեւ սփիւռքի աշխուժացում՝ ի նպաստ սփիւռքեան կառոյցներու, ծրագրերու եւ սփիւռքահայ մարդու, եւ վերջապէս, որպէս Հայաստանի ներդրում՝ սփիւռքի տարբեր թիրախային ծրագրերու մէջ։

Այս բոլորը կ'ենթադրեն, ընդհանուր ծրագրաւորման կողքին, Չայաստանի ամէն մէկ, առանց բացառութեան ամէ՛ն մէկ նախարարութեան խիստ ներգրաւուածութիւնը այս գործին եւ, բնականաբար, հզօր ու նոր հիմքեր վրայ դրուած սփիւռքի նախարարութեան կազմութիւն, ֆինանսական համապապասխան, արտակարգ ու արտասովոր ներդրում այն տրամաբանութեամբ, որ իւրաքանչիւր ներդրումային լումայ պէտք է իր բարոյական կամ տնտեսական բազմապատիկ արդիւնքը ունենայ։ Ուստի, մեր մտածողութեան մէջ պէտք է ամրագրել այս տարողութեամբ ֆինանսական ներդրումի անհրաժեշտութեան գաղափարը, որուն համար կարելի է եւ պէտք է ստեղծել ու գտնել թէ՛ դասական եւ թէ՛ նոր լուծումներ, սփիւռքեան (ոչ միայն հայկական) աղբիւրներէ, մինչեւ՝ Չայաստանի պետական պիւտճէ ու հայաստանեան ընկերութիւններ, զորս կարելի է խրախուսել անոնց տալով իրենց մասնակցութեան չափով առաւելութիւններ։ Սա, ճիշդ է, այլ քննարկման կիւթ է, սակայն այստեղ հետաքրքրականն այն է, որ բոլոր հարցերը փոխկապակցուած են այնքան որ միայն ընդհանուր համակարգումը կրնայ մեզ դուրս բերել մասնակի ու կարկանդակ լուծումներէ։

Վերակազմակերպել սփիւռքը

Վերադառնալով սփիւռքին՝ նշեմ, որ անոր վերակազմակերպումը պէտք է ենթադրէ իւրաքանչիւր մասնակից հայու արժեւորումը՝ մատչելի դարձնելով անոր միտքը, լսելի՝ անոր ձայնը եւ տեսանելի՝ անոր գործը։ Այս պատճառով անհրաժեշտ է ստեղծել թէ՛ տուեալ երկրի մէջ եւ թէ՛ ընդհանուր սփիւռքի տարողութեամբ շփման հորիզոնական հարթակներ՝ օգտուելով ներկայ հաղորդակցութեանց միջոցներէն, բայց նաեւ՝ ուղիղ շփման նոր, հրապուրիչ, հետաքրքրաշարժ, հարստացուցիչ միջավայրեր, որ սփիւռքի լուռ մեծամասնութիւնը նոյնքան տեղ կ'ունենայ, որքան՝ աւելի վերջի իմ նշած արդէն ինքզինք կրկնող ու յաճախ հիւծուած տարրեր, ուր առաջինները իրենց թարմութեամբ, իւրայատկութեամբ ու փորձառութեաներով, վստահ եմ, դրականօրէն պիտի զարմացնեն բոլորս։

Այս թարմացած սփիւռքը, ուրեմն, չի կրնար արդիւնաւետ ըլլալ ու մնալ, եթէ անոր աշխատանքուած եւ ներգործութիւնը կառուցուած, մտածուած եւ հիմնարկուած չըլլաւ։ Մեր մեծագոյն թշնամին, այս փուլին, ծախողութիւնն է, զոր պէտք է բացառել՝ իմանալով, որ բազմաթիւ ուժեր պիտի փորձեն խանգարել մեր երթը։

Իսկ ինչպէ՞ս համակարգել ու կառուցել այս ամէնը։ Առաջարկներէն մէկը, որ խումբ մը հայրենակիցներու քննարկումներու արդիւնքն է վերջին տարիներուն, այն է, որ համայնք առ համայնք հետաքրքրուած հայերը արձանագրուին եւ մասնակցին համայնքային ընտրութիւններու. ընտրութիւններ, որոնք պիտի ձեւաւորեն սփիւռքեան խորհուրդարանը, ուր կ'ուղարկւըին համայնքներու ընտրեալ պարագլուորները, եւ հոն կը ձեւաւորուի ապագայ սփիւռքի խորհուրդը։ Ե

ՊԱՍԵՏԵՊՈՒԼ

ԼԻԲԱՆԱՆԻ ՏՂՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ 6-ՐԳ ՅԱԶՈՐԳԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ



Ասիոյ պասքեթպոլի բաժնի գտումի մրցաշարքին գծով իր կատարած 6-րդ եւ վերջին մրցումին, Լիբանանի տղոց ազգային խումբը, որ մաս կը կազմէ Դ. խմբակին, երէկ յետմիջօրէին արծանագրեց իր 6-րդ յաջորդական յաղթանակը, երբ այս անգամ 99-71 արդիւնքով պարտութեան մատնեց իր մրցակիցը՝ Յնդկաստանը։

Մասնամայի մէջ (Պահրէյն) կատարուած երեկուան այս մրցումին, Մայրիներու կազմը դարձեալ ունեցաւ տպաւորիչ ելոյթ մը։

Արդէն իսկ արծանագրուած 4-րդ յաղթանակէն ետք, Լիբանան ապահոված էր ճաքարթայի մէջ (Իստոնեգիա) 16-28 օգոստոսին տեղի ունեանալիք աւարտական հանգրուանի մրցումներուն իր տոմսը։

Երեկուան այս մրցումին, Լիբանան իր յաղթանակը արծանագրեց իր հիմնական չորս մարզիկներուն՝ Աթեր Մաճոքի, Ուաէ Արաքժիի, Էլի Ռըսթոմի եւ Ալի Յայտարի բացակայութեան։

Լիբանանէն փայլուն ելոյթ ունենալով, 24 կետ նշանակեց Ժոզէֆ Շարօնիին։ Ժրար Յատիտեան նշանակեց 16 կետ, Զարիմ Ազգետտին եւ Սերճիօ Տարուիշ՝ 14-ական կետ, իսկ Ալի Մըզհէր՝ 11 կետ։

ՔԱԼԻԱՐԻ ՊԱՇՏՕՆԱՆԿ ԸՐԱՒ ԻՐ ՄԱՐԶԻՉԸ

Իտալական Զալիարի ֆուլթպոլի խումբը երէկ պաշտօնական ըրաւ իր զգլխաւոր մարզիչը՝ Էօզէպիօ Տի Ֆրանչեսքոն։



Ակումբին մամլոյ քարտուղարութիւնը յայտնեց, որ անոր հետ պաշտօնագրկուեցան նաեւ մարզիչներու յանձնախումբին մաս կազմող հինգ անդամներ։

Նշենք, որ ակումբը անոր հետ, Նախորդ 25 յունւար 2021-ին կնքած էր Նոր պայմանագրութիւն մը, մինչեւ յունիս 2023։

Ան Նախապէս եղած է Սասուոլոյի, Ա. Ես. Ռոմայի, Սամտորիայի, Փեսքարայի եւ Լեչէի մարզիչ։

Իտալիոյ ֆուլթպոլի ախոյեանութեան 23-րդ հանգրուանի մրցումներէն ետք, Զալիարի կը գտնուի 18-րդ վտանգաւոր դիրքին վրայ։

ՆԱՓՈԼԻ ԵՆԱԲԱՅԱՊԱՅԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ՄՆԱԼ ԲԺԻՇԿՆԵՐՈՒՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ



Նախորդ շաբաթավերջին, Իտալիոյ ֆուլթպոլի ախոյեանութեան 23-րդ հանգրուանի մրցումներուն, Նափոլիին մաս կազմող Նիկերիացի յառաջապահ Վիքթոր Օսիմէն, Աթալանթայի դէմ կատարուած մրցումին, գլուխէն իր ստացած վնասուածքին պատճառով տեղափոխուեցաւ հիւանդանոց, յայտնեց անոր ակումբին մամլոյ քարտուղարութիւնը։

21 տարեկան ֆուլթպոլիստը հիւանդանոց հասաւ՝ իր գիտակցութիւնը կորսնցուցած։

Երէկ նշուեցաւ, որ ան Պերկամոյի հիւանդանոցներէն մէկուն մէջ, կը շարունակէ մնալ բժշկներու հսկողութեան տակ։

Ընթացիկ տարեշրջանին ան Նափոլիի հետ կատարեց 15 մրցում՝ նշանակելով 2 կոլ եւ կատարելով **Էսիսթ** մը։

ԵՌՎԵՆԹՈՒՄ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՊԻՏԻ ԱՌԱՋԱՐԿԵ ՊՈՒՖՈՆԻՆ

Իտալիոյ ֆուլթպոլի ախոյեան Եուվեթոս մտադիր է երկարաձգել իր պայմանագրութիւնը իտալացի իր բերդապահին՝ Ճիանլուիճի Պուֆօնի հետ։

Իտալական մամուլին համաձայն, 43 տարեկան Պուֆօնի պայմանագրութիւնը Նախատեսուած պիտի ըլլայ մինչեւ յառաջիկայ տարեշրջանին աւարտը։

Նշուեցաւ, որ Պուֆօն մտադիր է Իտալիոյ ֆուլթպոլի ախոյեանութեան մէջ խաղալ մինչեւ 44 տարեկան եւ գերազանցել Մարքո Մալորթի մրցանիչը, որ 2008-ին իր վերջին մրցումը կատարեց, երբ 44 տարեկան եւ 38 օրական էր։ Պուֆօն «Բալչիօ»-ի մրցումներուն ցարդ կատարած է 654 մրցում, ինչ որ կը նկատուի մրցանիչ։

ՃԱՏՐԱԿ

ԳԱՐՈՒՋԵԱՆ ԵՒ ԳԱՐՈՅԵԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՄՆԱԼ ԱՌԱՋԻՆ

Երէկ՝ երկուշաբթի, 22 փետրուարին, Տիգրան Պետրոսեանի ճատրակի տան մէջ շարունակուեցան Յայաստանի ճատրակի տղոց եւ աղջկանց 2021 տարուան բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան 6-րդ հանգրուանի հանդիպումները։

Տղոց մրցումներուն, Յովհաննէս Գաբուզեան ճերմակ քարերով հաւասարութիւն մը արծանագրեց Սամուէլ Տեր Սահակեանի հետ եւ իր տրամադրութեան տակ ունեւանալով 5 կետ, շարունակեց մնալ առաջին դիրքին վրայ։

Գաբուզեանէն կէս կէտով ետ կը մնայ Արման Փաշիկեան, որ երէկ սեւ քարերով հաւասարութիւն մը արծանագրեց Լեւոն Բաբուշեանի հետ։

Ինչ կը վերաբերի աղջկանց մրցումներուն, յառաջատարն է Սուսաննա Փաբոյեան, որ սեւ քարերով հաւասարութիւն մը արծանագրեց Սիրանուշ Դուկասեանի հետ, այժմ ունի 4,5 կետ։

ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ԵՒ ՎԻՔ ԴԱՐՉԻՆԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌԻՆԵՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԵՆ ՎԻՐԱՌՈՐՈՒԱԾ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Ողիմպիական խաղերու ըմբշամարտի ախոյեան, աշխարհի եռակի եւ Եւրոպայի հնգակի ախոյեան, եւրոպական խաղերու յաղթական Արթուր Ալեքսանեան հանդիպում ունեցաւ արցախեան պատերազմին մասնակցած վիրաւոր զինուորներուն հետ։

Այս հանդիպումին Ներկայ էին նաեւ Յայաստանի յունահռոմէական ըմբշամարտի հաւաքականին միւս ըմբիշները եւ արհեստավարժ կռիւմարտի թեթեաւոյն բաշային կարգի աշխարհի Նախկին բացարձակ ախոյեան Վիք Դարչինեան։

Անոնց հետ այս հանդիպումը տեղի ունեցաւ Ծաղկաձորի մէջ, ուր Յայաստանի Դուկարիոյ հաւաքականները միատեղ հաւաք մը կը կատարեն՝ պատրաստուելու համար 25-28 փետրուարին Քիեւի մէջ կատարուելիք ըմբշամարտի միջազգային մրցաշարքի մը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԱՐԱՐԱՏ-ԱՐՄԵՆԻԱ ՅԱՂԹԵՅ ՓԻՆԻԿԻՆ

Յայաստանի ֆուլթպոլի բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան 6-րդ հանգրուանէն յետագուած մրցումի մը ընթացքին, Արարատ-Արմենիա, որ հիւրընկալեց Փինիկը, արծանագրեց 2-1 արդիւնքով յաղթանակ մը։

Յաղթական կազմէն կոլի եւ **Էսիսթի** հեղինակ դարձաւ Յայաստանի ազգային հաւաքականի 33 տարեկան յառաջապահ Ալեքսանտր Կարապետեան։

Նշենք, որ այս մրցումը Կարապետեանի համար եղաւ Նորամուտը՝ ախոյեանութեան գծով։

ԼՈՒՔԱՔՈՒ ԿՐԿՆԵՅ ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆԻ 71 ՏԱՐՈՒԱՆ ՄՐՅԱՆԻՇԸ

Իտալական Ինթեր Միլանի պէճիքացի յառաջապահ Ռոմելու Լուքաքու Նախորդ շաբաթավերջին Ա. ՍԵ Միլանի դէմ տեղի ունեցած մըրցումին («Բալչիօ») կոլի հեղինակ դառնալով, կարելոր իրագործում մը կատարեց։

27 տարեկան Լուքաքու կոլի հեղինակ դարձաւ, միլանեան **տերպիի** յաջորդաբար չորրորդ մրցումին։

Նախապէս այդ մըրցանիչը իրագործած էր Պենիթօ Լորենցի՝ 1950-ին։

Իսկ Ա. ՍԵ. Միլանէն մրցանիչը անցեալին իրագործած է Ռոմէօ Պոնտեթի՝ 1972-1973 տարեշրջանին։

Նշենք, որ Լուքաքու 2019-ի ամրան Մանչեսթըր Եունայթեմէն տեղափոխուեցաւ Ինթեր Միլան։



Մարիա Գերդեան, որ ճերմակ քարերով յաղթեց Աննա Խաչատրեանին, 4 կէտով կը գրաւէ երկրորդ դիրքը։

Տղոց ախոյեանութիւնը բաղկացած է 11 հանգրուանէ, իսկ աղջկանցը՝ 9 հանգրուանէ։



տակի եւ Պուկարիոյ հաւաքականները միատեղ հաւաք մը կը կատարեն՝ պատրաստուելու համար 25-28 փետրուարին Քիեւի մէջ կատարուելիք ըմբշամարտի միջազգային մրցաշարքի մը։



Իր արծանագրած այս յաղթանակէն ետք, Արարատ-Արմենիա այժմ ունեցաւ 21 կետ՝ 10 մրցումէ։ Իսկ Փինիկ, որ 11 մրցումէ ապահոված է 5 կետ, կը գտնուի 9-րդ դիրքին վրայ։



Ան իր կազմին հետ ցարդ կատարած է 81 մրցում եւ նշանակած 57 կոլ։

«ՉԵՄՓԻԸՆՆ ԼԻԿ»

ԱՅՍՈՐ՝ ԱԹԼԵԹԻՔՈ ՄԱՏՐԻՏ-ՉԵԼՍԻ ԵՒ ԼԱՅԻՌ ՌՈՍԱՊԱՅԵՐԻ ՄԻՆԻՆ

«Չեմփիընը Լիկ»-ի ֆուլթպոլի մրցաշարքին 1-16-րդ հանգրուանի երթի մրցումներուն ծիրին մէջ, այսօր կը կատարուի բաւական հետաքրքրական, «տաք» եւ զօրաւոր ճակատումներ։

Սպանիոյ ֆուլթպոլի ախոյեանութեան պարագլուխի դիրքին վրայ գտնուող Աթլետիքօ Մատրիտ պիտի հիւրընկալէ լոնտոնեան Չելսին։

Այլ կարելոր ճակատումի մը ընթացքին, Պայերն Միւնխի Իտալիոյ մէջ հիւրը պիտի ըլլայ Լացիօ Ռոմային։

Այս երկու մրցումներուն ալ ազդանշանը պիտի տրուի ժամը 22:00-ին՝ Պէյրուի ժամանակացոյցով։

Վաղուան յայտագիրին ես կը գտնուի երկու մրցումներ։

Աթալանթա կը հիւրընկալէ Ռեալ Մատրիտին, իսկ Պորուսիա Մեոնընկաւտպան՝ Մանչեսթըր Սիթին։



ՀԱՄԼԱՆՏ ԱՇԽԱՏԱՎԱՐՉԻ ՅԱՒԵԼՈՒՄ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ

Պորուսիա Տորթմունտին մաս կազմող Նորվեկիացի 20 տարեկան յառաջապահ Էրիկսկ Պրոթ Յաւալստ, Միսօ Ռայոլայի միջոցով (անոր փոխանցման գործողութիւնները կատարողը) գերմանական ակումբէն աշխատավարձի յաւելում կը պահանջէ։

Ըստ «Տէլի Սթար»-ին, ան կը փափաքի, որ իր ակումբը իրեն հետ կնքէ 5 տարուան պայմանագրութիւն մը, շաբաթական 350 հազար եւրօ աշխատավարձով, ինչ որ հինգ տարուան ընթացքին պիտի կազմէ Նուազագոյնը 90 միլիոն եւրօ։

Նշենք, որ ֆուլթպոլիստով հետաքրքրուած են Ռեալ Մատրիտ, Մանչեսթըր Սիթի, Մանչեսթըր Եունայթեմ եւ Չելսի։

Ան այս տարեշրջանին, իր ակումբին հետ իր կատարած 26 մրցումներուն ընթացքին նշանակած է 29 կոլ եւ կատարած 7 **Էսիսթ**։



ԹԵՆԻՍ

ՆԱՍՄԻ ՕՍԱՔԱ ԲԱՐՉՐԱՅԱՒ 2-ՐԳ ԴԻՐՔ

Թենիսի միջազգային ֆետերասիօնը երէկ հրապարակեց տղոց եւ աղջկանց միջազգային Նոր դասաւորումը։

Աղջկանց դասաւորման պարագլուխի դիրքին վրայ կը գտնուի աստորալիացի Էշլի Պարթի։

Նախորդ շաբաթավերջին, Աւստրալիոյ կրան շլեմի միջազգային տիտղոսին տիրացած ճափոնցի Նամի Օսաքա բարձրացաւ 2-րդ դիրք, մինչ 3-րդ դիրք Նահանջեց ռումանացի Սիմոնա Յալեկի։

Ռուսահայ Մարկարիթա Գասպարեան կը զըտնուի 129-րդ դիրքին վրայ (Նախապէս՝ 127-րդ)։

Ինչ կը վերաբերի տղոց դասաւորման, առաջին դիրքին վրայ կը շարունակէ մնալ սերպ Նովաք Ճոքովիչ։

Անոր ետին յաջորդաբար 2-րդ եւ 3-րդ դիրքերը կը գրաւեն սպանացի Ռաֆայէլ Նատալ եւ ռուս Տանիլ Մետվետն։

Ռուսահայ Կարեն Խաչանով 20-րդ դիրքէն Նահանջեց 21-րդ դիրք։

«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»

ՆԵԹՅ ՅԱՂԹԱԿԱՆ՝ ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍԻ ՄԵՋ. ՀԱՐՏԵՆ ՆՇԱՆԱԿԵՅ 37 ԿԵՏ

«ԷՆ. ՊԻ. Էյ.»-ի պասքեթպոլի ախոյեանութեան ծիրին մէջ երէկ կատարուած մրցումներուն, Պրուլլին Նեթց կարելոր յաղթանակով մը վերադարձաւ Լոս Անճելըսէն, ուր 112-108 արդիւնքով յաղթեց դաշտին տիրոջ՝ Զիլվըրզին։

Յաղթական կազմէն Ճէյմս Յարտեն նշանակեց 37 կետ։ Զիլվըրզէն Փոլ Ճորճ նշանակեց 34 կետ։

Նշենք, որ ցարդ տեղի ունեցած մրցումներէն ետք ամենէն ատէլի շատ յաղթանակը արծանագրած է Եուլթա Ճեզ (24)։



ԻՐԱՆԸ ՈՒ ԱԶՐՊԷՅՃԱՆԸ ՀԱՄԱԶԱՅՆԱԾ ԵՆ ԱՐԱՔՍԻ ՎՐԱՅ ԵՐԿՈՒ ԶՐԵԼԵԿՏՐԱԿԱՅԱՅԱՆՆԵՐՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՇՈՒՐՋ



Իրանի եւ Ազրայեճանի կառավարությունները հաստատած են Արաքս գետին վրայ կառուցուող «Ղըզ Ղալասի» եւ «Խուտաֆերին» ջրէլեկտրակայաններու շինարարութեան աշխատանքներու շարունակութիւնը:

Ազրայեճանական լրատուամիջոցները կը հաղորդեն, որ այս մասին յայտարարուած է Իրանի Արեւելեան Ազրայեճան Նահանգի Թաւրիզ քաղաքին մէջ տեղի ունեցած խորհրդակցութեան ընթացքին:

Իրանեան Նահանգին եւ Լեռնային Ղարաբաղի Ջրական (Ճեպրայիլ) շրջանին միջեւ կառուցուող ջրէլեկտրակայանի շինարարութիւնը Իրանի ուժանիւթային Նախարարութեան կողմէ իրականացուող հիմնական Նախագիծերէն մէկն է:

«ՅՈՒՆԱՍՏԱՆԻ՝ ՀԱԿԱԹՐՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԵՐԱԶՆԵՐԸ ՊԻՏԻ ՎԵՐԱԾՈՒԻՆ ՄՂՁԱՒԱՆՋԻ»

Կ'ԸՍԷ ԶԵԼԻԶ



Յունաստանի եւ Կիպրոսի՝ հակաթրքական դաշինքի երազները պիտի վերածուին մղձաւանջի: «Անատոլու» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտարարած է Թուրքիոյ իշխող Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութեան բանբեր Էօմեր Զելիք:

Զելիք ընտադատած է Թուրքիոյ եւ ինքնահռչակ Զիւսիսային Կիպրոսի թրքական հանրապետութեան բացառումը Միջերկրական ծովու հիմնախնդիրները ըննարկելու նոր միջազգային Նախաձեռնութենէն:

Թրքական պետական լրատու գործակալութիւնը կը պարզաբանէ, որ Բարեկամութեան համախմբումի առաջին հանդիպումին, որ 11 փետրուարին տեղի ունեցած է Աթէնքի մէջ, մասնակցած են Յունաստանը, Կիպրոսը, Եգիպտոսը, Պահրէյնը, Սեւտական Արաբիան եւ Արաբական Միացեալ Էմիրութիւնները: Ֆրանսան ներկայ եղած է իբրեւ դէտ:

Յիշեցնենք, որ հակաթրքական համախմբումին մասնակցելու հրաւեր ստացած էր Նաեւ Զայաստան, սակայն անձանօթ պատճառներով չէր մասնակցած:

Ըստ «ՏԵՅԷ ՎԵԼԷ»-ի, մասնակիցներուն կարծիքով, Բարեկամութեան համախմբումը Նպատակ ունի «բարելաւելու համագործակցութիւնը անվտանգութեան, առողջապահութեան, ուժանիւթի եւ շրջակայ միջավայրի պաշտպանութեան ոլորտներուն մէջ, որոնք կը տարածուին Արեւելեան Միջերկրականէն մինչեւ Արաբական ծոց»:

Զելիք Նշած է, որ Յունաստանը եւ Կիպրոսը օգտագործած են Թուրքիոյ դէմ երկիրները միատրելու Նախաձեռնութիւնը՝ հետապնդելով շրջանին մէջ իրենց սեփական շահերը:

«Մենք կ'երաշխաւորենք, որ այդ երազները պիտի վերածուին մղձաւանջի», Թուրքիոյ իշխող կուսակցութեան բանբերին խօսքերը կը մէջբերէ «Անատոլու»-ն:

Յիշեցնենք, որ լարուածութիւն սկսած է Թուրքիոյ եւ Յունաստանի ու Կիպրոսի միջեւ՝ առնչուած Արեւելեան Միջերկրականի մէջ բնական կազի պաշարներու հասանելիութեան, ինչ որ կը թեժացնէ ծովային սահմաններու երկարատեւ վեճը:

Զելիք Նշած է, որ Ֆորումը կրնայ խաթարել այս խնդիրը լուծելու Եւրոպական Միութեան ջանքերը:

«Ոչ մէկ հանդիպում, որ կը բացառէ Զիւսիսային Կիպրոսի թրքական հանրապետութիւնը, սակայն կը կեդրոնանայ յունական Կիպրոսին վրայ, կրնայ «Բարեկամութեան համախմբում» Նկատուիլ», աւելցուցած է ան:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Սեւան Ալեքսանտրեանի մահուան առիթով, տեղ եւ տիկին Վարդան եւ Թային Պայթարեան 500.000 լ. n.՝ «Թռչնոց բոյն»-ին:

ՔՈՆԿՈՅԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄՊԱՆՆՈՒՄԸ Է ԻՏԱԼԻՈՅ ԴԵՄՊԱՆԸ

Երեկ Զոնկոյի Դեմոկրատական Զանրապետութեան մէջ Իտալիոյ դեսպան Լուքա Աթանասիոն սպաննուած է երկրի արեւելքին մէջ զինեալ յարձակումի մը պատճառով: Այս մասին կը հաղորդէ ԱՖՓ լրատու գործակալութիւնը՝ վկայակոչելով դիւանագիտական աղբիւրներ:

Զոնկոյի «Աքթուալիթէ» կայքը Նախապէս յայտնած է, որ Զիւսիսային Իուլի Նահանգի Կոմա քաղաքի շրջանին մէջ յարձակումը կատարուած է ՄԱԿ-ի Պարենաւորման համաշխարհային կազմակերպութեան ինքնաշարժներու շարասիւնին վրայ:

Քանի մը ինքնաշարժներ ինկած են անձանօթ զինեալներու կողմէ լարուած թակարդը: Անոնց Նպատակը եղած է պատանդներու առեւակզումը:



ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Երթի մասնակիցները պարբերաբար կոչ կ'ուղղէին՝ միանալու երթին, միանալու եւ ո'չ ըսելու, իսկ քաղաքացիները պատշգամներէն կ'ողջունէին զանոնք:

Մասնակիցները կանգ առին Նախագահական Նստավայրին մօտ, ուր Գեղամ Մանուկեան յայտարարեց, որ արցախեան կորուստէն ետք շատեր հասկցան, թէ 2018 թուականին որո՞ւ յանձնած էին իշխանութիւնը, մէկը, որ կը սիրէ նիւթապաշտութիւնը, յարմարաւետութիւնը: «Զիմա, կանգնած այստեղ կը դիմենք Զայաստանի Նախագահին, որ պաշտօնապէս միացաւ ժողովրդի շարժումին եւ վարչապետի հրաժարականի պահանջին, որ Արմէն Մարգարեանը պաշտօնական պահանջի տեղը ըլլայ: Այդ պատճառով ունի 2 գործողութիւն՝ չվաւերացնել որեւէ փաստաթուղթ, որ կ'ուղարկուի Նախագահական պալատ վաւերացման, իսկ երկրորդը՝ պետք է դիմէ գործողութիւններու՝ քաղաքացիներուն, օրէնքը պաշտպանելու եւ կառավարութեան ու Նիկոլի հրաժարականը ժամ առաջ իրականութիւն դարձնելու համար», ըսաւ ան:

Երթին մասնակիցները կանգ առին Ազգային ժողովին դիմաց: «Երեք տարի առաջ Ազգային ժողովի դարպասները բացած էին, կ'ընէին՝ Ազգային

ժողովը ժողովուրդին եւ Զայաստանի մէջ փակ դարպասներ պիտի չըլլան: Զիմա Նայեցէ՛ք այս դարպասներուն, վերջին 2-3 ամսուան մէջ կրկնակի ամրացուցած են, ասիկա է այս իշխանութեան դիմագիծը», յայտարարեց Իշխան Սաղաթելեան եւ կոչ ուղղեց պատգամաւորներուն՝ միանալու պայքարին:

«Առանց Նիկոլ Զայաստան» կարգախօսով երթին մասնակիցները հասան Ֆրանսայի հրապարակ, ուր եզրափակեցին երթը:

«Ինչ որ կատարուեցաւ սարսափելի էր, ինչ որ մեզի կը սպասէ ասոնց օրով՝ աւելի սարսափելի պիտի ըլլայ», յայտարարեց Զայրենիքի փրկութեան շարժումի վարչապետի թեկնածու Վազգէն Մանուկեան: Ան շեշտեց, որ ասիկա քաղաքական պայքար չէ, այլ Նպատակ ունի փրկելու հայ ազգը եւ այս պետութիւնը:

Իշխան Սաղաթելեան յայտարարեց, որ 23 փետրուարին՝ ժամը 11:30-ին (Երեւանի ժամանակացոյցով), պիտի հաւաքուին կառավարութեան շէնքին մօտ՝ թոյլ չտալու Փաշինեանին տեղաշարժիլ, իսկ 18:30՝ Արամ Մանուկեանի արձանին մօտ ու երթով պիտի ուղղուին դատախազութեան, ապա ոստիկանութեան շէնքի մօտ:

ՔՐԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՂԵՏ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԷՋ ...

Շարունակուած Ա. Էջէն

Չազարաւոր կամաւորներ եւ զինւորներ կ'օգնէն մաքրելու ափը մագուիկ կոյտերէն, որոնք լուրջ վնաս հասցրեցած են բնութեան: Վնասուած տարածքներուն մէջ յայտնաբերուած են սատկած կրիաներ, ծուկեր եւ թռչուններ, որոնք մացորդները ներկուած են սեւ գոյնով:

Իսրայէլի իշխանութիւնները կը կործնեն յստակացնել ապականման պատճառը. Նախնական տուեալներու համաձայն, պատճառը Նաւէ վառելանիւթի արտադրութիւնն է:

Իսրայէլի՝ 190 քիլոմետրնոց ծովեզրեայ գիծի մեծ մասին մէջ յայտնաբերուած են մագուիկ կոյտեր: Տեղական իշխանութիւնները կը վախճան, որ վնասուած տարածքին մաքրումը կրնայ ամիսներ կամ Նոյնիսկ տարիներ տեւել: Բնակիչներն կը խնդրուի,

որ գերծ մնան միջերկրականեան լողափներ այցելել:

Որպէսզի պարզեն, թէ ո՞ր Նաւէ կրնար տեղի ունեցած ըլլալ արտադրութեան, մասնագետները կ'ուսումնասիրեն արբանեակային պատկերները եւ ալիքներու ուղղութիւնը:

Իսրայէլի բնապահպանութեան Նախարար Կիւա Կամիլէ յայտնած է, որ տարածքին մէջ գտնուող ինը Նաւէներ կը կասկածուի: Իսրայէլի իշխանութիւնները կը ըննարկեն հատուցման համար դատական հայց յարուցելու կարելիութիւնը, ինչ որ մեղաւորներուն կրնայ արժէ միլիոնաւոր տոլարներ:

Իսրայէլի վարչապետ Պէնիամին Նեթանիահու անձամբ այցելած է ծովեզրերներէն մէկը՝ գնահատելու համար վնասը:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ Կ'ՈՒՋԵՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Այս մասին յունական թերթերուն յղում կատարելով կը հաղորդէ «ՌԻԱ Նովոս»-ն՝ Նշելով, որ ատիկա պիտի ըլլայ երեք տարուան ընթացքին փոխադարձ պաշտպանական համագործակցութեան երկրորդ արդիականացումը համաձայնագիրը:

Համաձայնագիրը կը Նախատեսէ ամերիկեան ռազմակայանի ընդլայնում, Միացեալ Նահանգներուն Սթեֆանովիքի, Լարիսա եւ Ալեքսանտրուփոլիս ռազմակայաններու ենթակառոցներու տրամադրում, ինչպէս

Նաեւ Յունաստանի հետ համաձայնութեամբ անոր տարածքին մէջ որեւէ զինուորական վայր օգտագործելու կարելիութիւն:

Յունաստանի արտաքին գործոց Նախարար Նիքոս Տենտիա, հոկտեմբեր 2020-ին յունական խորհրդարանին մէջ իր արտասանած խօսքին մէջ յայտնած էր, որ Յունաստան մտադիր է ընդլայնել Միացեալ Նահանգներու հետ պաշտպանական համաձայնագիրը կամ Նոր համաձայնագիր ստորագրել:

ԱՄՏՐԱԼԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Աւստրալիական դիւանագիտութեան պետը յանձնախումբին եւ Աւստրալիոյ հայ համայնքին ուղղուած պատասխան Նամակին մէջ ողջունած է Լեռնային Ղարաբաղի մէջ հաստատուած զինադադարի դրութիւնը: Վերջինս միեւնոյն ժամանակ ընդգծած է երկու կողմերու՝ Զէլիքեան եզրափակիչ հռչակագիրի ուսումնասիրման անհրժեշտութիւնը, որ կոչ կ'ուղղէ յարգելու «ուժ չկիրարկելու, տարածքային ամբողջականութեան եւ ժողովուրդներ

րու ինքնորոշման իրաւունքի սկզբունքները»:

Նախարար Փէյն Զայաստանին եւ Ազրայեճանին կոչ ուղղած է աջակցելու ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի գործունեութեան՝ շրջանին մէջ խաղաղութիւն հաստատելու համար:

Յիշեցնենք, որ վերջերս աւելի քան 3000 աւստրալիացիներ խնդրագիր ստորագրած էին՝ Աւստրալիոյ խորհրդարանին կոչ ուղղելով ճանջալու Արցախի Զանրապետութիւնը:

«ՎՐԱՍՏԱՆԸ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԶԱՐԿԱՅՆԵԼ ՊԱՔՈՒԹԻՅԵԼԻՍ-ԿԱՐՍ ԵՐԿԱԾՈՒՂԻՆ»

Կ'ԸՍԷ ՂԱՐԻՊԱՇՎԻԼԻ



Պաքու-Թիֆլիս-Կարս Նախագիծին իրագործումը զգալիօրէն պիտի կրճատէ Ասիոյ եւ Եւրոպայի միջեւ բեռներու փոխադրման համար անհրաժեշտ ժամանակը, ինչ որ պիտի արտօսէ Վրաստանին յաւելեալ ապրանքներ ներգրաւել տարանցիկ փոխադրման համար: «Կրուգիա Օւլայն» կը հաղորդէ, որ այս մասին կը Նշուի Վրաստանի Նոր կառավարութեան 2021-2024 թուականներու ծրագիրին մէջ:

Փաստաթուղթին մէջ կը Նշուի, որ Վրաստան պիտի շարունակէ համարկումը միջազգային փոխադրամիջոցային համակարգերուն մէջ եւ պիտի խորացնէ շրջանային համագործակցութիւնը տարանցիկ միջանցքի մրցունակութիւնը բարձրացնելու Նպատակով:

«Կը ծրագրենք աշխատիլ գործընկեր երկիրներուն հետ տարանցիկ միջանցքի թուային ապահովման ուղղութեամբ, ինչ որ պիտի բարձրացնէ Վրաստանի տարածքով իրականացուող բեռնափոխադրումներու արդիւնաւետութիւնն ու կայունութիւնը», կը Նշուի վարչապետի թեկնածու Իրաքլի Դարիպաշվիլի կառավարական ծրագիրին մէջ, որ վարչապետին կողմէ այսօր կը ներկայացուի երկրի խորհրդարանին:

Դարիպաշվիլի Նախապէս Նշած է կառավարութեան կարճաժամկետ առաջնաւերթութիւնները եւ խոստացած վարչապետի պաշտօնին հաստատուելու պարագային ներկայացնել Վրաստանի զարգացման 10-ամեայ ծրագիրը:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Շարունակուած 2-րդ Էջէն

●ՆԱԽԿԻՆ Նախարար Աշրաֆ Ռիֆի յայտնեց, որ Զինուորական ատեանի որոշումները սովորաբար ծայրայեղ խստութեան կ'ուղղուին, երբ հարցը վերաբերի հիւսիսային Լիբանանի եւ Թրիփոլիի տղոց դէմ պատժական միջոցառումներ տնօրինելու:

●ՆԱԽԿԻՆ Նախարար Մոհամմէտ Օպէյտ յայտնեց, որ Լիբանանի հսկայ փորձանքի մը դիմաց կը գտնուի՝ աւելցնելով, որ դատաւոր Ֆատի Մուսաւէն Պէյրութի Նաւահանգիստի պայթումին հետաքննութեան պարտականութիւնը խլելը արդարութիւնը սպաննելու համազօր է:

●ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր Ժահիժան անհրաժեշտ Նկատեց, որ սեփական մարզը արտօնութիւն ստանայ՝ «Զորոնա» ժահիրին դէմ պատուաւորներ ներածելու:

●ՄԻԱՑԵԱԼ Նահանգներու մէջ Լիբանանի Նախկին դեսպան Ռիատ Թապպարա յայտնեց, որ Ուաշինգթոն իր շահերուն յարմար կը գտնէ Թեհրանի հետ Նոր համաձայնութեան մը ստորագրութիւնը:

●ԻՐԱՆԻ արտաքին գործոց Նախարար Մոհամմէտ Շաուառ Զարիֆ յայտնեց, որ Դէրբուքի Նաւահանգիստի պայթումին ետք Թեհրանի առաջարկած է օժանդակել Լիբանանին, սակայն ամերիկեան ճնշումներուն պատճառով կարելի չէ եղած պետք եղած օժանդակութիւնը Լիբանան հասցնել:

●ՊԵՆՉԻՆԻ կայաններու սենտիքայի Նախագահ Սամի Պրաքս կիրակի, 21 փետրուար 2021-ին, տեղի տալով «Զորոնա» ժահիրի համավարակի հարուածին, իր մահկանացուն կնքեց: Պրաքսի մահը գուժեցին պենզիին եւ առհասարակ քարիւղի ու վառելանիւթերու մարզի զանազան պատասխանատուներ:

Got Questions About **COVID-19?**
A TEAM OF DOCTORS IS READY TO ASSIST YOU

call us on
01 518 014

U.S.M. AFHIL
 ARMENIAN MUTUAL FUND

GlobeMed